Շվեդիա
Sverige

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ
Independent observer

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2023

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

#ԵՐԵՎԱՆ_2023

Խմբագիր՝
Արթուր Սաքունց

Հեղինակներ՝
Վարդինե Գրիգորյան
Անտոն Իվչենկո
Վահրամ Թոքմաջյան

Դիտորդական առաքելությունն իրականացվել է և սույն զեկույցը պատրաստվել է Ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամի և Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում ֆինանսավորող կառույցների տեսակետները:

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

Բովանդակություն

Նախաբան 4
Մեթոդաբանություն 6
Օրենսդրական դաշտ 7
Քաղաքական համատեքստ 9
Առաջադրված կուսակցություններ և կուսակցությունների դաշինքներ 11
Նախընտրական քարոզչության դիտարկման արդյունքներ 17
Նախընտրական քարոզչության հիմնական գծերը 17
Նախընտրական քարոզչության ֆինանսավորում 19
Վարչական ռեսուրսի օգտագործում 29
Հավաքների դիտարկման արդյունքներ 31
Արձանագրված այլ խախտումներ 34
Ընտրական գործընթացների նկատմամբ վստահությունը և ընկալումները 36
Ընտրությունների կազմակերպումը 40
Ընտրական հանձնաժողովներ 40
Տեղամասերի կահավորում և մատչելիություն 41
Ընտրական ցուցակներ 44
Դիտորդական առաքելություններ 45
Քվեարկության օրվա դիտարկման արդյունքները 47
Քվեարկության նախապատրաստում 47
Քվեարկության ընթացքը 47
Ձայների հաշվարկի ամփոփում 54
Հանրային տրամադրությունների և ընտրական վարքի ուսումնասիրության արդյունքներ 56
Արդյունքների վերլուծություն 63
Կանանց ներկայացվածությունը 65
Հետընտրական զարգացումներ 65
«Անկախ դիտորդ» դաշինքի գործողությունները և իրավասու մարմինների արձագանքը 67
Հիմնական եզրակացություններ 75
Առաջարկություններ ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ 75
Անկախ դիտորդ դաշինքի մասին 77

Նախաբան

2018 թ. հեղափոխությունից հետո Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հրաժարական տվեց, իսկ ավագանին չառաջադրեց այլ թեկնածու: Արդյունքում 2018թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցան Երևանի ավագանու արտահերթ ընտրությունները, որոնցում Քաղաքացիական պայմանագիր և Առաքելություն կուսակցությունների կողմից ձևավորած «Իմ քայլը» դաշինքը ստացավ Երևանի ավագանու 65 մանդատներից 57-ը, իսկ նրանց ցուցակը գլխավորող Հայկ Մարությանն օրենքի ուժով ընտրվեց քաղաքապետ:

2020թ. կորոնավիրուսային համավարակի և 44-օրյա պատերազմի ընթացքում և արդյունքում Քաղաքացիական պայմանագիր կուսակցության և քաղաքապետ Հայկ Մարությանի միջև առաջացած, սակայն ամբողջությամբ չբարձրաձայնված հակասությունները սրվեցին 2021թ ընթացքում: 2021թ. դեկտեմբերին իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախաձեռնությամբ Իմ Քայլը խմբակցությունն անվստահություն հայտնեց քաղաքապետին: Մարությանին անվստահություն հայտնելով՝ ավագանին քաղաքապետ ընտրեց ավագանու անդամ և քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանին, որն իշխող խմբակցության ավագանու կազմում ընդգրկված էր Առաքելություն կուսակցության կողմից: 2022թ. սեպտեմբերին փոխքաղաքապետ նշանակվեց իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության վարչության անդամ, նախկին փոխվարչապետ, քաղաքապետի ապագա թեկնածու Տիգրան Ավինյանը[1]: Հրաչյա Սարգսյանը հրաժարական ներկայացրեց 2023թ. մարտի 17-ին: 2023թ. հուլիսի 13-ի ՀՀ Կառավարության նիստում Երևանի ավագանու հերթական ընտրությունների օր նշանակվեց սեպտեմբերի 17-ը:

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել էր 13 կուսակցություն և 1 դաշինք:

Ընտրությունների քարոզարշավի մեկնարկից ի վեր «Անկախ դիտորդ» դաշինքի 11 դիտորդներ երկարաժամկետ դիտորդություն են իրականացրել Երևանի բոլոր վարչական շրջաններում: Քարոզարշավի ընթացքում դիտորդները հարցազրույցներ են իրականացրել նախընտրական շտաբ ունեցող 10 ուժերի շտաբների 39 ղեկավարների հետ և բոլոր 14 ուժերի 100 թեկնածուների հետ: Դիտարկվել են 11 ուժերի 81 հավաք և հարցազրույցներ են իրականացվել այդ հավաքներին մասնակցող 131 անձի հետ: Հանրային ձայն կուսակցությունը, Հայաստանի Եվրոպական կուսակցությունը և Հանուն սոցիալական արդարության կուսակցությունը հավաքներ չեն իրականացրել:

Արձանագրվել է միջադեպի/խախտման մասին 64 ահազանգ: Դրանք ուսումնասիրվել են իրավաբանական աջակցության թիմի կողմից և ձեռնարկվել են անհրաժեշտ գործողություններ:

Երևանի ավագանու ընտրությունների անցակցման համար կազմավորվել է 475 տեղամաս: Դրանց աշխատանքը կազմակերպվել է 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները համապատասխանում են Երևան քաղաքի վարչական շրջաններին, բացառությամբ երկու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի, որոնք սպասարկում են երկուական վարչական շրջան:

[1] Վարչական ռեսուրսների չարաշահմամբ անհավասար հնարավորությունների ձևավորումը խախտում է ժողովրդավարական սկզբունքները՝ https://hcav.am/22-08-2023independentobservermediamonitoring/

ԸԸՀ	Վարչական շրջան	ԸԸՀ	Վարչական շրջան
Թիվ 1	Ավան	Թիվ 6	Աջափնյակ
Թիվ 2	Նոր Նորք	Թիվ 7	Մալաթիա-Սեբաստիա
Թիվ 3	Քանաքեռ-Զեյթուն	Թիվ 8	Շենգավիթ
Թիվ 4	Արաբկիր	Թիվ 9	Կենտրոն և Նորք-Մարաշ
Թիվ 5	Դավթաշեն	Թիվ 10	Էրեբունի և Նուբարաշեն

Քվեարկության օրն իրականացվել է շրջիկ դիտորդություն: Հանձնաժողովի նիստը դիտարկվել է 105 տեղամասում: Քվեարկության ընթացքում դիտորդներն այցելել են 468 տեղամասեր և ձայների հաշվարկը դիտարկվել է 94 տեղամասում: Ընտրական վարքի գնահատման համար քվեարկության օրը կարճ հարցումներ են անցկացվել ընտրություններին մասնակցած 624 ընտրողի հետ: Սույն զեկույցում ներկայացվող թվական տվյալները կարող են տարբերվել նախնական գնահատականի թվական տվյալներից, քանի որ հիմնված են ստացված տվյալների առավել մանրամասն և երկարատև ուսումնասիրման վրա:

Նախընտրական փուլը անցել է մրցակցային, միաժամանակ նաև բևեռացված մթնոլորտում. թեկնածու կուսակցությունները կիրառում էին միմյանց հանդեպ արմատական հռետորաբանություն, իսկ Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունը լայնորեն ընկալվում էր որպես իշխանափոխության կամ կառավարության լեգիտիմության ևս մեկ քննություն, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հարցերում բեկումնային ազդեցություն ունեցող գործընթաց:

Ընտրողների ցածր մասնակցությամբ քվեարկության արդյունքում թեկնածու ուժերից որևէ մեկը չստացավ ընտրողների մեծամասնության քվեն: Հավանական համարվող Քաղաքացիական Պայմանագիր և Հանրապետություն կուսակցությունների կոալիցիայի ստացած մանդատների ընդհանուր թիվը նույնպես բավարար չէր մեծամասնություն կազմելու համար:

Սեպտեմբերի 19-ին, ընտրությունների նախնական արդյունքների հայտարարման հաջորդ օրը Լեռնային Ղարաբաղում՝ ՌԴ խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտում Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը ռազմական հարձակման անցան և մեկուսացրին խոշոր բնակավայրերը: Ռազմական գործողությունների արդյունքում եղան հարյուրավոր զոհեր երկու կողմերից, ընդ որում՝ 21 քաղաքացիական զոհ: ԼՂ բնակչությունը զինված ուժի սպառնալիքի ներքո լքեց իր տները և օրերի ընթացքում բռնի տեղահանվեց Հայաստանի Հանրապետության տարածք: Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողություններին զուգահեռ Երևանում տեղի էին ունենում Լեռնային Ղարաբաղի անվտանգության պահանջով հակակառավարական հավաքներ, որոնք զուգորդվում էին ոստիկանության և ցուցարարների միջև բախումներով:

Մեթոդաբանություն

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական փուլը դիտարկվել է 11 դիտորդի կողմից, որոնք իրականացրել են իրենց առաքելությունը հավաքների մշտադիտարկման և ընտրական գործընթացների մասնակիցների հետ հարցազրույցների միջոցով:

Դիտորդները համապատասխան հարցաթերթիկներով հարցազրույցներ են իրականացրել առաջադրված թեկնածուների, շտաբների ղեկավարների, հավաքների մասնակիցների, տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների հետ:

Երևանի ավագանու ընտրությունների քվեարկության օրը «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի շրջիկ դիտորդությունն իրականացվել է շուրջ 140 դիտորդի կողմից՝ մի քանի դիտարկման քարտերի հիման վրա:

Քվեարկության օրը դիտարկման քարտերի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն հանձնաժողովի նիստի, քվեարկության ընթացքի, արձանագրված խախտումների, տեղամասային կենտրոնների կահավորման և ձայների հաշվարկի մասին: Արդյունքների ամփոփումը դիտարկվել է նաև Երևան քաղաքի 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում:

Միաժամանակ շրջիկ դիտորդների կողմից դիտարկվել են առաջադրված կուսակցությունների շտաբները և ընդհանուր իրավիճակը տեղամասերի շրջակայքում՝ ընտրողների վերահսկողության դեպքերը բացահայտելու նպատակով:

Քվեարկության օրը ստանդարտացված հարցաթերթով հարցում է անցկացվել ընտրություններին մասնակցած 624 ընտրողի հետ , որի նպատակն էր պարզել քվեարկության և մասնակցության վերաբերյալ որոշումների կայացման շարժառիթները: Յուրաքանչյուր դիտորդ իրականացրել է 6-8 հարցազրույց, ձգտելով պահպանել հարցվածների սեռերի բաշխվածությունը հավասար, իսկ տարիքային խմբերի առումով՝ յուրաքանչյուր տարիքային խմբից ունենալով մեկական հարցված կին և տղամարդ:

Առաքելությանն աջակցող թիմը բաղկացած է եղել դասընթացավարներից, համակարգողներից, տեղեկատվություն մուտքագրողներից և իրավաբաններից: Իրավաբանական թիմի կողմից դիտորդներին տրամադրվել է իրավական խորհրդատվություն, իսկ խախտումների վերաբերյալ ահազանգերի հիման վրա ներկայացվել են դիմումներ, հաղորդումներ համապատասխան ընտրական հանձնաժողովներին և իրավապահ մարմիններին:

Օրենսդրական դաշտ

Երևան քաղաքում տեղական իշխանությունների ձևավորման համամասնական ընտրակարգը կիրառվում է 2009 թվականից: 2018 թվականից ի վեր ընտրական օրենսդրությունում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ, որոնց մի մասը վերաբերել է Երևանի ավագանու 2023թ. ընտրություններին:

Համայնքի ղեկավարի արտահերթ կամ հերթական ընտրության կարգավորումների, ինչպես նաև ավագանու լուծարման հիմքերի մասով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը հղվում է Ընտրական օրենսգրքին: Այս կարգավորումները վերաբերում են Հայաստանի բոլոր համայնքներին, բացառությամբ Երևանի: Երևանում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը, իր հերթին, 2020թ. իրականացված փոփոխությունների արդյունքում, քաղաքապետի չընտրվելու դեպքում ավագանու ժամկետի կրճատման առումով հղում է կատարում ՀՀ Ընտրական օրենսգրքի միայն մեկ՝ **142.2 հոդվածին**: Այս հոդվածով կարգավորվում է համամասնական ընտրակարգով համայնքի ղեկավարի միայն հերթական ընտրությունը, իսկ 142.3 հոդվածը, որը կարգավորում է համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը, Երևանի դեպքում կիրառելի չէ:

Այսինքն Երևանում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը ենթադրում է արտահերթ ընտրություն միայն գործող քաղաքապետին անվստահություն հայտնելու համատեքստում, մինչդեռ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը նախատեսում է նաև այլ հիմքով համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն:

Տեղական ինքնակառավարման մասին օրենքի և Երևանում տեղական ինքնակառավարման մասին օրենքի կարգավորումների տարբերության հետևանքով քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի հրաժարականից հետո ավագանու կողմից համայնքի նոր ղեկավար չընտրելը, օրենքի տառին համաձայն, հիմք չէր ավագանու ժամկետը կրճատելու և արտահերթ ընտրություններ նշանակելու համար:

Հարկ է նշել նաև, որ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու միջոցով նոր համայնքի ղեկավարի ընտրության գործընթացը թե՛ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում (Հոդված 68), թե՛ Երևանում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում (Հոդված 40) ընթացակարգային առումով հակասում է ՀՀ Ընտրական օրենսգրքին, քանի որ նախատեսում է փակ քվեարկություն, մինչդեռ 2021թ. փոփոխությունների համաձայն, ընդհանուր առմամբ նախատեսված է ավագանու կողմից համայնքի ղեկավարի ընտրությունը բաց քվեարկությամբ:

2021թ. կատարված փոփոխություններով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում կիրառվող քվեարկության կարգը կիրառվում էր նաև Երևանի ավագանու ընտրություններին: Այս կարգի համաձայն յուրաքանչյուր կուսակցության և կուսակցությունների դաշինքի համար տպվում է առանձին քվեաթերթիկ: Ընտրողը քվեարկության սենյակում ստանում է բոլոր քվեաթերթիկները և մեկ ծրար և իր նախընտրած կուսակցության կամ դաշինքի քվեաթերթիկն առանց որևէ նշում անելու կամ ծալելու դնում է ծրարի մեջ:

2023թ. ուժի մեջ մտած կարգավորման համաձայն քվեարկության սենյակներում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերում տեսանկարահանումը և հեռարձակումը նախատեսվեց նաև ՏԻՄ ընտրությունների ժամանակ: Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ առաջին անգամ

կիրառվեց թեկնածուների գրանցման էլեկտրոնային համակարգը: Գովազդային վահանակների բաշխումը ևս իրականացվում է էլեկտրոնային համակարգով: Էլեկտրոնային գրանցման համակարգը գործում է դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների համար 2022 թվականից:

Խոշորացված համայնքների ավագանու ընտրությունների դեպքում կուսակցությունների ընտրացուցակներում նախատեսվում է խոշորացված համայնքների բնակավայրերի առնվազն 50 տոկոսից թեկնածուներ ներկայացնելու քվոտա: Այս պահանջը չի վերաբերում Երևանի վարչական շրջաններին, սակայն դիտարկումը ցույց է տալիս, որ առաջադրված բոլոր ուժերի դեպքում ներկայացված են վարչական շրջանների մեծամասնությունը: Մեկ սեռի ներկայացուցիչների թիվը ընտրական ցուցակի ամբողջական թվով եռյակներում չի կարող գերազանցել 70 տոկոսը: Ավագանու ընտրություններին մասնակցելու համար կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները կարող են ներկայացնել տվյալ համայնքի ավագանու անդամների թվի ⅓-ի չափով թեկնածուներ: Թեկնածուների առավելագույն թիվը չի կարող գերազանցել ավագանու անդամների թվի եռապատիկը: Համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրությունների դեպքում շեմը կուսակցությունների համար վավեր քվեների 4%-ն է, իսկ դաշինքների դեպքում 6%-ը: Նախկին կարգավորումներով այս թվերը համապատասխանաբար 6 և 8 տոկոս էին:

Օրենսդրությամբ երաշխավորված է ավագանու կազմում նվազագույնը երեք կուսակցությունների/դաշինքների մանդատներ ստանալը՝ անկախ ընտրական շեմը հաղթահարելու հանգամանքից:

Ընտրական գործընթացների վրա էական ազդեցություն ունեն քարոզչության վերաբերյալ կարգավորումները և սահմանափակումները, որոնք ուղղված են մասնակից քաղաքական կուսակցությունների հնարավորությունները որոշակիորեն հավասարակշռելուն: 2021թ. մայիսի 7-ին ընդունված փոփոխություններով Ընտրական օրենսգիրքը ներառեց վարչական ռեսուրսի բնույթի նկարագրությունը՝ «Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:»

Երևանի ավագանու ընտրությունների համատեքստում վերաբերելի էին մասնավորապես վարչական ռեսուրսի չարաշահման, բարեգործության արգելքի, ասոցացվող տպագիր գովազդային նյութերի և ընտրակաշառքի կանխարգելման կարգավորումները, որոնց բացերն ու թերությունները օրենսդրական հետագա բարեփոխումների առաջնահերթությունը պիտի հանդիսանան:

Քաղաքական համատեքստ

2021թ. Աժ արտահերթ ընտրությունները հետևանք էին պատերազմի արդյունքում առաջացած քաղաքական ճգնաժամի: Թեև կարճաժամկետ առումով ընտրությունների արդյունքում հաղթահարվեց ճգնաժամը, սակայն 2022թ. դեկտեմբերին սկսված Լեռնային Ղարաբաղի շրջափակման արդյունքում, հումանիտար և անվտանգային իրավիճակի վատթարացումը կրկին հանգեցրին ներքաղաքական իրավիճակի լարվածությանը: Երևանի ավագանու հերթական ընտրությունները ընդդիմադիր քաղաքական ուժերը կրկին ձևակերպեցին որպես իշխանությունների լեգիտիմության քննություն:

2021թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին և հետագա ՏԻՄ ընտրություններին իշխող Քաղաքացիական պայմանագիրը հանդես եկավ «Ապագա կա՛» կարգախոսով: Երևանի ավագանու ընտրությունների կարգախոսը և քարոզչական գիծը կենտրոնանում էին կուսակցության ընտրական ցուցակը գլխավորող Տիգրան Ավինյանի կերպարի և միայն ավագանու լիազորությունների շրջանակում լուծվող հարցերի վրա:

Նմանատիպ քարոզչական վարքագիծ էին դրսևորում նաև Լուսավոր Հայաստան կուսակցությունը՝ ի դեմս Դավիթ Խաժակյանի և «Հաղթանակ» կուսակցությունը՝ ի դեմս Կենտրոն համայնքի նախկին թաղապետ Վիկտոր Մնացականյանի:

Անդրադառնալով Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության քարոզչական ռազմավարությանը և ընդհանուր առմամբ քաղաքական համատեքստին, հարկ է նշել, որ Երևանում նախընտրական պայքարին մի կողմից ներգրավվել էին ՀՀ այն համայնքներում կուսակցության ռեսուրսները, որոնցում կուսակցությունը ստացել էր մեծամասնություն ՏԻՄ մակարդակում, մյուս կողմից կիրառվում էր վարչական ռեսուրսը՝ Երևանի քաղաքապետարանի, այլ համայնքապետարանների, Երևանում և մարզերում գործող ՀՈԱԿ-ների և ՊՈԱԿ-ների աշխատողների ներգրավմամբ:

Անկախ դիտորդ դաշինքը դեռևս հուլիսին իրականացրած լրագրողական հետաքննության արդյունքում բացահայտել էր Սպիտակ համայնքում համայնքային պաշտոնյաների կողմից որոշակի «քարոզչական» աշխատանքների իրականացումը: Աշխատանքներն ուղղված էին Երևանում ընտրելու իրավունք ունեցող, Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության օգտին քվեարկող անձանց ցուցակագրմանը, մերձավորների շրջանում քարոզչությանը՝ չարաշահելով իրենց պաշտոնական դիրքը և լիազորությունները:[2]

Օգոստոսին Անկախ դիտորդը հրապարակեց մեդիայի մշտադիտարկման արդյունքները, որով ցույց տրվեց, Երևանի քաղաքապետի, առաջին տեղակալի և բոլոր փոխքաղաքապետերի լուսաբանման վիճակագրությունը Հանրայինի լրատվական կայքի, համայնքապետարանի կայքի և ֆեյսբուքյան էջի հարթակներում: Այս վիճակագրությունից հստակ երևում է, թե ինչպես են հանրային ֆինանսավորում ստացող հարթակները օգտագործվել քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանի օգտին քարոզչության իրականացման համար, ինչն ավելի ծավալվեց քաղաքապետ

[2] ՔՊ-ն, այլ համայնքների վարչական ռեսուրսն օգտագործելով, ձայներ է հավաքում Երևանի ընտրությունների համար, https://hcav.am/ind-obs-21-07-2023-statement/

Հրաչյա Սարգսյանի հրաժարականից հետո:[3] Ազգային ժողովում ներկայացված ընդդիմադիր կուսակցությունները չէին մասնակցում այս ընտրություններին: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների օգոստոսի 24-ին ԱԺ «Հայաստան» խմբակցության նիստում որոշվել էր աջակցել խմբակցության նախկին պատգամավոր Անդրանիկ Թևանյանի գլխավորած «Մայր Հայաստան» դաշինքին:[4]

Այնուամենայնիվ, նախընտրական մթնոլորտը տեսանելիորեն մրցակցային էր, իսկ Միջազգային Հանրապետական Ինստիտուտի դեռևս մայիսին հրապարակված հետազոտությունը[5] վկայում էր, որ ընտրողների ընդհանուր անտարբերությունը և գործող քաղաքական ուժերի հակավարկանիշը կարող են հնարավորություն ստեղծել նոր քաղաքական ուժերի համար:

Մի շարք թեկնածուների քարոզչության առանցքում Արցախի խնդիրն էր: Առնվազն Ապրելու երկիր կուսակցությունը և «Մայր Հայաստան» դաշինքը Երևանի ավագանու ընտրությունները ներկայացնում էին որպես Հայաստանում իշխանափոխության մեկնարկի հնարավորություն: Նմանատիպ որոշակի միտումներ կային նաեւ Ազգային առաջընթաց կուսակցության խոսույթում, սակայն գաղափարախոսական այլ շեշտադրումներով:

Հունիսի 29-ին մեկնարկեց ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու նպատակով «ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնության ստորագրահավաքը: Նախաձեռնության կողմից առաջարկվող փոփոխությունները բաղկացած էին երկու հոդվածներից՝ «Արցախի Հանրապետությունը այլ պետության կազմում ճանաչումից և Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելուն»[6]: Նախաձեռնության կողմից ընդհանուր առմամբ շուրջ 58 000 ստորագրություն ներկայացվեց ԿԸՀ՝ անհրաժեշտ նվազագույնը 50 000 ստորագրության փոխարեն: Բաց տվյալների համաձայն դրանց 40-50% հավաքագրվել է Երևանում: Հանդես գալով ընդդիմադիր դիրքերից «ՀայաՔվե» նախաձեռնությունը հայտարարել էր, որ չի մասնակցելու Երևանի ավագանու ընտրություններին, սակայն չէր բացառում, որ կաջակցի որևէ թեկնածուի: Ի վերջո նախաձեռնությունը հանդես եկավ դիտորդական առաքելությամբ:

Սեպտեմբերի 1-ին ԼՂՀ նախագահ Արայիկ Հարությունյանը հրաժարական ներկայացրեց, ԼՂ ԱԺ պատգամավորների կողմից Արցախի Հանրապետության նոր նախագահ ընտրվեց Սամվել Շահրամանյանը:

Սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ Արցախի հանրապետության անկախության հռչակման օրվան նվիրված հանրահավաքը, որը նախաձեռնվել էր ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանի կողմից: Այս հավաքին ներկա էին և իրենց աջակցությունն էին հայտնել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը, որոնք սակայն ելույթներ չունեցան հարթակից

---

[3] Վարչական ռեսուրսների չարաշահմամբ անհավասար հնարավորությունների ձևավորումը խախտում է ժողովրդավարական սկզբունքները https://hcav.am/22-08-2023independentobservermediamonitoring/

[4] Որոշվել է աջակցություն հայտնել Անդրանիկ Թևանյանի գլխավորությամբ «Մայր Հայաստան» դաշինքին https://www.aravot.am/2023/08/25/1363922/

[5] Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն՝ https://www.iri.org/wp-content/uploads/2023/05/Armenia_Final-Presentation_08.05.2023_Arm.pdf, էջ. 18-20

[6] Քաղաքացիական նախաձեռնությամբ ներկայացված նախագիծ https://res.elections.am/images/doc/draft2023.pdf

և հանդես էին գալիս որպես մասնակից: Ընդհանուր առմամբ խոսնակները չէին անդրադառնում գալիք ընտրություններին, սակայն «Մայր Հայաստան» դաշինքի քաղաքապետի թեկնածու, Աժ նույն խմբակցության նախկին պատգամավոր Անդրանիկ Թևանյանը իր խոսքում նշեց «եթե ձեր վստահությունը լինի՝ անձամբ պատրաստ եմ ստանձնել այդ պատասխանատվությունը»՝ չընդգծելով ինչպիսի պատասխանատվության մասին է խոսքը:

Սեպտեմբերի 15-ին Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական վերջին երթ-հանրահավաքում հանդես եկավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Իր ելույթում Նիկոլ Փաշինյանը անդրադարձավ ընդդիմադիր կուսակցությունների «իշխանափոխության» խոսույթին, ոչ անվանական անդրադառնալով քաղաքական մրցակիցներից երկուսին՝ Երևանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանին և «Հայաստան» դաշինքի նախկին Աժ պատգամավոր Անդրանիկ Թևանյանին, ակնարկելով երկուսի կապը արտահայաստանյան ուժերի հետ և կապը ՀՀ նախկին իշխանությունների հետ: Կոչ անելով սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու ընտրություններին Քաղաքացիական պայմանագրի օգտին քվե տալ՝ Նիկոլ Փաշինյանը կոչ էր անում քվեարկել «այն գիտակցությամբ, որ այդ դպրոցում, այդ մանկապարտեզում կոփվում է Հայաստանի պետականությունը, Հայաստանի ինքնիշխանությունը, Հայաստանի անկախությունը:»[7] Այս ելույթով նա ըստ էության նույնպես դիրքավորեց ավագանու ընտրությունները երկրի քաղաքական կուրսի որոշման, փրկության կամ անկման դաշտում:

Առաջադրված կուսակցություններ և կուսակցությունների դաշինքներ

2018 թվականի ավագանու ընտրություններին մասնակցում էր 8 կուսակցություն և 4 դաշինք, որոնցից ընտրական շեմը հաղթահարեցին «Իմ քայլը» դաշինքը (Քաղաքացիական պայմանագիր և Առաքելություն կուսակցություններ) և Բարգավաճ Հայաստան կուսակցությունը: Քանի որ Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ ավագանու կազմում պիտի հայտնվի առնվազն 3 ուժ, հաջորդ առավել շատ ձայներ ստացած «Լույս» դաշինքը (Լուսավոր Հայաստան և Հանրապետություն կուսակցություններ) ևս ստացավ մանդատ, չնայած՝ չէր հաղթահարել անցողիկ շեմը:

Բարգավաճ Հայաստան կուսակցությունը հայտնել էր, որ չի մասնակցելու ընտրություններին,[8] Քաղաքացիական պայմանագիր և Հանրապետություն կուսակցությունները, չնայած առաջադրվում էին առանձին, ի սկզբանե դիտարկվում էին որպես ապագա կոալիցիայի անդամներ, Լուսավոր Հայաստան կուսակցությունը հանդես էր գալիս որպես զուսպ, համակարգային ընդդիմություն: Առաքելություն կուսակցությունը, 2021թ. ամառվանից փաստացի դադարելով գոյություն ունենալ և վերափոխվելով Ապրելու Երկիր կուսակցության, հանդես էր գալիս առանձին և հայտ էր ներկայացնում ընդդիմադիր հիմնական ուժ լինելու՝ վկայակոչելով ՀՀ մի քանի համայնքերում Քաղաքացիական պայմանագրի հանդեպ ընտրություններում տարած

[7] https://youtu.be/kjlJ88bs1yM?t=10459

[8] Բարգավաճ Հայաստան կուսակցությունը չի մասնակցելու Երևանի ավագանու առաջիկա ընտրություններին, https://yerkir.am/hy/article/2023/08/11/16291

հաղթանակները: Հարկ է նշել, որ թեև Առաքելություն կուսակցության վերաբերյալ նախկին ոչ բոլոր տվյալներն են բաց աղբյուրներից հայտնի, սակայն Ապրելու երկիր կուսակցության փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն Առաքելություն կուսակցության վերանվանումն է՝ միևնույն իրավաբանական հասցեով և գրանցման տվյալներով:

Նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը հայտնել էր ընտրություններին իր մասնակցության մասին նախապես՝ մինչև որևէ կուսակցության ցուցակով առաջադրվելու մասին պայմանավորվածության ձեռք բերելը: Այնուամենայնիվ, հանշվի առնելով Քաղաքացիական պայմանգիր կուսակցության կողմից իր պաշտոնանկության համար գործադրված ջանքերը, նա ընկալվում էր հասարակության մի մասի կողմից որպես Տիգրան Ավինյանի հիմնական մրցակիցը:

2023թ. Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու համար առաջադրվեց 1 դաշինք և 13 կուսակցություն: Առաջադրված բոլոր ուժերը գրանցվեցին առանց խնդիրների: Ընտրություններին մասնակցելու հայտ է ներկայացրել 808 թեկնածու, որոնցից մեկը հրաժարվել է մասնակցությունից գրանցման մեկնարկին, ևս 5-ը մինչև քվեարկության օրը: Ամենաշատ՝ 181 թեկնածու ներկայացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, 2-րդ ամենաշատ թեկնածուներ առաջադրել է «Ապրելու Երկիր» կուսակցությունը՝ 129 թեկնածու: «Ազգային Առաջընթաց» և «Հանրապետություն» կուսակցություններն առաջադրել են համապատասխանաբար 71 և 68 թեկնածու, իսկ մյուս բոլոր ուժերն առաջադրել են ավագանու անդամների ընդհանուր թվից (65) պակաս թեկնածուներ:

Քվեարկության օրվա դրությամբ առաջադրված ուժերի կազմը հետևյալ տեսքն ուներ:

ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺ	**Առաջին համար / քաղաքապետի թեկնածու**	**Ընդամենը**
1.«Հանրային ձայն» կուսակցություն	Արտակ Գալստյան	46
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	Տիգրան Ավինյան	181
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	Նորայր Նորիկյան	33
4.«Հաղթանակ» կուսակցություն	Վիկտոր Մնացականյան	24
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	Նելլի Հարությունյան	45
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	Տիգրան Խզմալյան	24
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	Հայկ Մարության	69
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	Արման Ղուկասյան	28
9.«Հանրապետություն» կուսակցություն	Արտակ Զեյնալյան	68
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	Երվանդ Թարվերդյան	32
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	Դավիթ Խաժակյան	50
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	Սուրեն Պետրոսյան	33
13.«Ապրելու երկիր» կուսակցություն	Մանե Թանդիլյան	129
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	Անդրանիկ Թևանյան	40
Ընդամենը		**802**

Երկու սեռերի ներկայացվածության ապահովման քվոտան դրական են գնահատել հարցված թեկնածուների 86%--ը, նրանցից 6%-ը սակայն նշել է, որ պահանջը բավարարելու դժվարություններ են ունեցել:



Կանայք ամենաքիչը ներկայացված էին «Ազգային Առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակում՝ 31,88%, իսկ առավել մեծ ներկայացվածություն ունեին «Ուժը հայրենյաց» և «Հանուն սոցիալական արդարության» կուսակցությունների ցուցակներում՝ 50%: Կանայք գլխավորում էին «Ապրելու Երկիր» և «Ուժը հայրենյաց» կուսակցությունների ցուցակները: Բոլոր կուսակցությունները պահպանել են օրենսդրական պահանջը՝ նախընտրական ցուցակների յուրաքանչյուր եռյակում ներկայացված են եղել երկու սեռի թեկնածուներ:



Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ տվյալ կուսակցության կամ դաշինքի անդամ չհանդիսացող թեկնածուների թիվը չի կարող գերազանցել ընտրական ցուցակում առաջադրված թեկնածուների 30%-ը: Բոլոր առաջադրված ուժերը օգտվել են այս կարգավորմամբ նախատեսված հնարավորությունից, սակայն, եթե Հայաստանի Եվրոպական Կուսակցության ցուցակում անկուսակցական էր թեկնածուներից միայն մեկը, Ազգային առաջընթաց կոսակցության ցուցակում

անկուսակցականները 21-ն էին, այսինք՝ 30,43%: Ազգային առաջընթացը փաստացի չարաշահել է անկուսակցական թեկնածուների քվոտան առաջադրված կուսակցական թեկնածուներից մեկի գրանցման պահից հետո ներկայացված ինքնաբացարկի պատճառով: Գործող կարգավորումներով այդ հանգամանքը կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հիմք չէ:

«Ուժը հայրենյաց» կուսակցության, «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Ազգային Առաջընթաց» կուսակցության 1-ին համարների թեկնածուները, ովքեր, ըստ տրամաբանության հավակնում էին համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնելուն, անկուսակցական էին:



Ի տարբերություն խոշորացված համայնքների, Երևանի դեպքում չի գործում վարչական շրջաններից թեկնածուներ ներկայացնելու պահանջը (խոշորացված համայնքներում առաջադրվող կուսակցությունները պիտի ներկայացնեն թեկնածուներ բնակավայրերի առնվազն կեսից):

Այս քվոտայի հետագա ներդրումը գնահատելու համար դիտորդները հարցրել են, թեկնածուներին, թե ինչպես կվերաբերվեին նման քվոտայի առկայությանը: Հարցվածների 62%-ը դրական է գնահատել նման կարգավորման ներմուծման հեռանկարը:



Չնայած հարցվածների գրեթե մեկ քառորդը բացասաբար է արտահայտվել և համարել, որ նման քվոտան արհեստականորեն կդժվարացներ առաջադրումը, փաստացի բոլոր կուսակցությունները ներկայացրել են թեկնածուներ վարչական շրջանների առնվազն կեսից, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու Երկիր» կուսակցությունների ցուցակներում ներկայացված են թեկնածուներ բոլոր վարչական շրջաններից: Ընդհանուռ առմամբ առավել քիչ թեկնածուներ նախընտրական ցուցակներում եղել են Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններից:

ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺ	ԱՐԱԲԿԻՐ	ԿԵՆՏՐՈՆ	ՇԵՆԳԱՎԻԹ	ԱՋԱՓՆՅԱԿ	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ	ՆՈՐ ՆՈՐՔ	ԷՐԵԲՈՒՆԻ	ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ	ԴԱՎԹԱՇԵՆ	ԱՎԱՆ	ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ
1.«Հանրային ձայն» կուսակցություն	3	12	4	8	4	9	0	2	2	2	0	0
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	21	32	20	21	20	17	11	12	8	10	6	3
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	6	2	5	8	6	2	1	2	1	0	0	0
4.«Հաղթանակ» կուսակցություն	1	12	1	2	1	1	2	1	2	0	1	0
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	8	10	3	7	3	2	5	4	1	2	0	0
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	2	6	1	3	1	1	2	8	0	0	0	0
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	16	12	2	6	5	7	6	4	4	4	0	3
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	3	3	3	1	8	3	3	2	1	1	0	0
9.«Հանրապետություն» կուսակցություն	6	14	18	7	3	1	15	3	0	0	1	0
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	8	4	5	3	1	2	2	1	3	3	0	0
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	7	2	5	3	8	6	2	7	9	1	0	0
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	10	2	2	2	4	8	2	1	1	1	0	0
13.«Ապրելու երկիր» կուսակցություն	8	13	16	16	21	11	11	10	11	8	2	2
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	6	10	9	5	0	5	2	1	1	1	0	0
Ընդամենը	**105**	**134**	**94**	**92**	**85**	**75**	**64**	**58**	**44**	**33**	**10**	**8**

Անկախ դիտորդի երկարաժամկետ դիտորդների հետ հարցազրույցներում առաջադրված ուժերի թեկնածուները ներկայացրել են, թե ընտրությունների որ արդյունքը կուսակցությունը/դաշինքը բավարար կհամարի: Ըստ այդմ ստացվել է հետևյալ պատկերը.



Որոշ դեպքերում թեկնածուները հավելել են, որ իրենց մասնակցությունն ունի այլ նպատակ, սակայն չեն հստակեցրել նպատակը: Տարբեր կուսակցությունների թեկնածուներ նշել են նաև, որ սեփական ադյունքից առավել առաջնահերթ են համարել ընտրողների մասնակցությունը քվեարկությանը:

Նախընտրական քարոզչության դիտարկման արդյունքներ

Նախընտրական քարոզչության հիմնական գծերը

Երևանի ավագանու ընտրություններից դեռևս ամիսներ առաջ ընտրություններում առավելություն ստանալու նպատակով քարոզչություն էին սկսել Տիգրան Ավինյանը, Մանե Թանդիլյանը և Նատալիա Ռոտենբերգը: Ավելի ուշ, սակայն պաշտոնական քարոզարշավից շուտ էր քարոզչությունը սկսել նաև Հայկ Մարությանը: Ընտրական օրենսգիրքը իհարկե չի սահմանափակում մինչև պաշտոնական քարոզչության մեկնարկը քաղաքական քարոզչության իրականացման իրավունքը, սակայն որոշ դեպքերի համար նախատեսում է առանձին կարգավորումներ, որոնք, դատելով ձևակերպումից, պիտի գործեն նաև հետահայաց, երբ որևէ քաղաքական գործիչը առաջադրվում է որպես թեկնածու: Մասնավորապես խոսքը վերաբերում է ընտրակաշառքի, բարեգործության արգելքի, թեկնածուի կամ կուսակցության հետ ասոցացված պաստառների, վարչական ռեսուրսի չարաշահմանը, մինչև նախընտրական հիմնադրամի բացումն իրականացված ծախսերի հայտարարագրմանը: Առավելապես քարոզչության և վարչական ռեսուրսի չարաշահման հարցը վերաբերել է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության համայնքի ղեկավարի թեկնածու Տիգրան Ավինյանին և ընդհանրապես ՔՊ կուսակցությանը:

Նախընտրական քարոզչության ընթացքում կուսակցությունները հիմնականում կիրառել են քարոզչության բոլոր ձևաչափերը, սակայն, ընտրողների հետ հանդիպումների տարբեր ձևաչափերից առավելապես նախընտրել են բակային հանդիպումները: Բակային հանդիպումներ և երթերները նախընտրել են Քաղաքացիական պայմանագիր, Ազգային առաջընթաց կուսակցությունները և Մայր Հայաստան դաշինքը: Ազգային առաջընթաց կուսակցության դեպքում սա ընտրողների հետ հանդիպման միակ ձևաչափն էր: Մայր Հայաստան դաշինքը հաճախ իրականացրել է նաև բաց դահլիճային հանդիպումներ: Հանրային ձայն և Հայաստանի եվրոպական կուսակցությունները հայտնել են, որ ընտրողների հետ հանդիպման որևէ ձևաչափ չեն կիրառել:




Ընտրողների հետ ինչպիսի՞ հանդիպումներ եք կազմակերպել/կազմակերպում
Երևանի ավագանու ընտրություններ 2023
Բակային հանդիպում/ներ
Երթ
Հանրահավաք
Բաց դահլիճային հանդիպում (մուտքն ազատ)
Փակ դահլիճային հանդիպում (միայն
Դրամահավաք
Համերգ
Այլ մշակութային/սպորտային միջոցառում
0%
25%
50%
75%
100%
հաճախ
հազվադեպ
եզակի, բացառիկ դեպքերում
ՀԿԴՊ
չենք իրականացնում

Նախընտրական քարոզչության ֆինանսավորում

Ընտրական օրենսգրքի փոփոխություններով նախատեսվում էր, որ 2023 թվականից թե՛ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության, թե՛ նախընտրական հիմնադրամի նկատմամբ վերահսկողությունը պիտի իրականացներ ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն արդեն իսկ իրականացնում է կուսակցությունների ընթացիկ ֆինանսական վերահսկողությունը: 2022թ. վերջին Ազգային ժողովը հերթական անգամ հետաձգեց նախընտրական հիմնադրամների վերահսկողության փոխանցումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Հետաձգումը նախաձեռնվել էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից և Ազգային ժողովին ներկայացվել Արդարադատության նախարարության կողմից:

Կուսակցությունների ֆինանսավորման վերահսկողությունը փաստացի իրականացվում է 2 առանձին մարմինների կողմից ու տարբեր ժամանակահատվածներում: Ընտրություններին մասնակցող կուսակցությունները ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին նախորդող 12 ամիսների գույքի, դրամական միջոցների ու եկամուտների վերաբերյալ հայտարարագրերը ներկայացնում են առաջադրման ամսվա 1-ին օրվա դրությամբ: Այս ժամանակահատվածը և հայտարարագրի ձևաչափը տարբերվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունից, որը ներկայացվում է օրացուցային տարվա կտրվածքով և դժվար համեմատելի են: Ավելին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացված հայտարարագիրը որևէ կերպ չի ստուգվում կամ համեմատվում այլ տվյալների հետ: Առանձին թեկնածուների կողմից ներկայացված հայտարարագրերը ևս չեն համեմատվում արդեն ընտրված ավագանիների կողմից ներկայացվող հայտարարագրի հետ:

2023թ. սեպտեմբերի 17-ին Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող 14 քաղաքական ուժերից 8-ը ԿԸՀ-ին ներկայացրած հայտարարագրերում ներկայացրել են միայն առկա դրամական միջոցների մասին տվյալներ: Նրանցից 4-ը հայտարարագրել են նաև եկամուտներ: Հանրապետություն կուսակցությունը չի հայտարարագրել որևէ դրամական միջոց, սակայն նշել է, որ ստացել է եկամուտ՝ պետական ֆինանսավորում: Առաջադրված ուժերից 5-ը ներկայացրել են զրոյական հաշվետվություններ:

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին են կատարվում՝

1) զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման ծախսերը.

2) համացանցով նախընտրական քարոզչության իրականացման, այդ թվում՝ քաղաքական գովազդի հրապարակման ծախսերը.

3) նախընտրական քարոզչության ընթացքում սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացման ծախսերը.

4) նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման ծախսերը.

5) ընտրական շտաբների տեղակայման նպատակով տարածքների վարձակալման ծախսերը.

6) քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, փակցման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի, ներառյալ տպագիր նյութերի պատրաստման ու տարածման հետ կապված ծախսերը.

7) նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վարձակալության հետ կապված ծախսերը (բացառությամբ մինչև 7 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների).

8) նախընտրական քարոզչության իրականացման նպատակով կազմակերպված մշակութային կամ մարզական միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը.

9) վստահված անձանց տրվող փոխհատուցման ծախսերը, եթե մեկ վստահված անձի հաշվով փոխհատուցման գումարը գերազանցում է 10 000 դրամը:

Նախընտրական քարոզչության համար ծախսերը չեն կարող գերազանցել 300 միլիոն դրամը:

Կուսակցությունների կողմից ներկայացված հայտարարագրերը, որոնք հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում, տեղադրվում են անմատչելի ձևաչափով և հրապարակվող տեղեկությունը վերլուծելը ոչ միայն ժամանակատար է, այլև բավարար չէ գնահատելու, թե որքանով են ամբողջական ու հիմնավոր ներկայացված դրամական մուտքերն ու ելքերը: Հայտարարագրված տեղեկության ուսումնասիրության և պայմանական դասակարգումից ստացվում է հետևյալ պատկերը.

Կուսակցություն	Գովազդ/ Դաստառ/ Տպագրություն	Ծառայության / աշխատանքի վճար	Վարձակալություն	Անվարձահատույց տարածք	Տրանսպորտ	Այլ	Բյուջե	Փաստացի	Շուկայական	Վերադարձ
1.«Հանրային ձայն» կուսակցություն	4,109,960	780,000	95,000	200,000	0	50,600		**5,035,560**	**5,420,560**	**0**
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	284,329,899	1,224,000	13,065,000	9,450,000	0	0	0	**298,618,899**	**288,691,459**	**19,377,440**
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	4,524,600	0	80,000	0	0	0	0	**4,604,600**	**4,604,600**	**0**
4.«Հաղթանակ» կուսակցություն	788,200	140,000	0	0	0	0	0	**928,200**	**928,200**	**30,000**
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	31,512,600	0	872,000	0	0	5,000	0	**32,389,600**	**32,439,600**	**0**
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	200,000	0	0	0	0	0	0	**0**	**200,000**	**0**
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	9,037,645	0	0	500,000	0	200	76,500	**9,114,345**	**9,744,487**	**200**
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	230,000	0	0	80,000	0	0	0	**230,000**	**310,000**	**0**
9.«Հանրապետություն» կուսակցություն	32,020,000	720,000	0	1,900,000	0	232,600	0	**32,972,600**	**34,872,600**	**382,000**
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	6,430,420	0	150,000	50,000	0	194,400	0	**6,774,820**	**6,824,820**	**0**
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	15,423,339	0	0	0	0	0	0	**15,423,339**	**15,423,339**	**0**
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	10,066,840	1,237,000	30,000	0	0	0	0	**11,333,840**	**11,333,840**	**0**
13.«Ապրելու երկիր» կուսակցություն	110,877,355	6,943,000	2,113,350	0	360,000	426,000	0	**120,719,705**	**157,066,825**	**893,000**
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	50,793,554	0	1,550,000	270,000	0	0	819,500	**53,163,054**	**53,433,054**	**1,910,000**
Ընդամենը	**560,344,411**	**11,044,000**	**17,955,350**	**12,450,000**	**360,000**	**908,800**	**896,000**	**591,308,561**	**621,293,384**	**22,592,640**

Կատարված ծախսերը ընդգծված լինելու դեպքերում առավել են, քան նշված է Վերահսկիչ - վերստուգիչ ծառայության ամփոփագրում, իսկ Միացյալ Հայաստան կուսակցության դեպքում պակաս են ամփոփագրում նշված թվից:

Նույնիսկ առկա սուղ տվյալներում ակնհայտ են մի շարք խնդիրներ, պարզ չէ՝ արդյոք ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ուսումնասիրել է դրանք և որն է եղել ուսումնասիրության արդյունքը:
Մասնավորապես՝

- Հանրային ձայն կուսակցության հայտարարագրած 50600 դրամի նկարագրությունը (Այլ սյունակ) նշված է ՝ Անանուն:
- Բոլոր հայտարարագրերի առավել աչքի ընկնող խնդիրն այն է, որ շուկայական արժեքի ներառումը խիստ կամայական բնույթ է կրում: Կուսակցությունները հիմնականում նշում են նույն գումարը փաստացի վճարման և շուկայական արժեքի տողերում: Այս լուծումը նույնքան կամայական է, որքան այն լուծումը, որը կիրառել է Քաղաքացիական պայմանագիրը ընտրական շտաբների վարձակալության առումով: Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը հայտարարագրել է, որ ունեցել է 112 ընտրական շտաբի տարածք, որից վճարել է 49-ի համար: Վարձակալած 49 տարածքների հայտարարագրված միջին արժեքը 266 600 դրամ է (ընդհանուր 13 065 000 դրամ): Այս տարածքների դեպքում միևնույն գումարն է նշված և փաստացի ծախսի և շուկայական արժեքի տողում: Մինչդեռ անհատույց օգտագործվող 63 տարածքների համար նշված է միևնույն 150 000 դրամ (ընդամենը 9 450 000 դրամ) արժեքը: Եթե անհատույց օգտագործվող տարածքների գումարը համապատասխաներ վճարովի տարածքների միջին գումարին ապա այս մասով հայտարարագրվելիք գումարը կլիներ շուրջ 16 798 000, ինչի արդյունքում ծախսի թույլատրելի առավելագույն շեմը կգերազանցվեր:
- Թեև նախընտրական քարոզչությունը մեկնարկել է սահմանված ժամկետից առաջ, սակայն միայն Ապրելու երկիր կուսակցությունն է հայտարարագրել մինչև հիմնադրամի ձևավորումը կատարած ծախսերը:
- Ապրելու երկիր և Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունների կողմից ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթի տվյալները պահանջող սյունակում ընդամենը գրված է պայմանագիր բառը: Ընդհանուր առմամբ հայտարարագրի ձևաչափն այնպիսին է, որ չի պարունակում որևէ տեղեկություն տվյալ ծախսի միավորի, քանակի կամ ծառայության ժամկետների վերաբերյալ, ըստ այդմ գրեթե անհնար է գնահատել՝ արդյոք այն արտացոլում է բոլոր ծախսերը: Օրինակ Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ նախընտրական հիմնադրամից են կատարվում քարոզչական նյութերի տարածման հետ կապված բոլոր ծախսերը, սակայն որևէ հայտարարագրից հասկանալի չէ, թե արդյոք հայտարարագրված են բուկլետների թռուցիկների տարածման ծախսերը: Ընդհանուր առմամբ հայտարարագրված են միայն քարոզչական նյութերի նկարահանման կամ ձևավորման հետ կապված ծառայությունները, մինչդեռ ներգրավված մարդկային ռեսուրսների առնչությամբ տեղեկատվությունը միայն էպիզոդիկ է և հավաքագրվել է դիտորդական առաքելության միջոցով:
- Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ կուսակցությունների նախընտրական հիմնադրամները պետք է ունենան անկանխիկ եղանակով վճարումներ իրականացնելու հնարավորություն (օնլայն բանկինգ, վճարային քարտ և այլն): Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ հայտարարագրում, որպես ծառայություն մատուցող նշված է Meta (Facebook) ընկերությունը, վճարումը

կատարված չէ նախընտրական հիմնադրամից և պարզապես ներառված է շուկայական արժեքի չափով:

- Մայր Հայաստան դաշինքի ներկայացրած հայտարարագրից կարելի է եզրակացնել ,որ նախընտրական հիմնադրամից կատարվել կամ նախատեսվել են ավելի շատ ծախսեր, քան առկա գումարն է: ՎՎԾ եզրակացությունից հստակ չէ, թե արդյոք գնահատվել է այս փաստը և թույլատրվել է կատարել լրացուցիչ մուտք՝ նշված պարտավորությունները կատարելու համար: Ի դեպ մուտքերի առումով հիմնադրամին կատարած նվիրատվություններն ակնհայտորեն խիստ համակարգված են: 37 թեկնածուներ ուղիղ մեկական միլիոն դրամ են նվիրաբերել հիմնադրամին, որը թեկնածուի կողմից նվիրաբերվող գումարի առավելագույն չափն է: Ֆիզիկական անձանց կողմից կատարվող նվիրատվությունների առավելագույն չափով՝ 100 000-ական դրամ նվիրաբերվել է 119 անգամ: Այս նվիրատվություններից 3-ը կատարվել են տերմինալի միջոցով և նշված չէ նվիրատուի անունը, իսկ 6 դեպքում նվիրատուն նույն անձն է, որը թեկնածու չէ և համապատասխանաբար գերազանցել է նվիրատվության առավելագույն չափը: Նվիրատվության առավելագույն չափը գերազանցել է նաև մեկ նվիրատու, որը փոխանցել է 120 000 դրամ: Նվիրատվության առավելագույն չափ գերազանցելու հիմքով պետական բյուջե փոխանցվել է 893 000 դրամ, ինչն առերևույթ պակաս է խախտումներով փոխանցված գումարի չափից: Թեկմնածուների կողմից համակարգված միանման մուտքերը նկատվում են նաև Միացյալ Հայաստան կուսակցության մոտ: Հարկ է նշել, որ մյուս ուժերի մոտ նման օրինաչափություններ նկատելը հնարավոր չէ այն պատճառով, որ հիմնադրամին մուտքերը իրականացվել են կուսակցության հաշվեհամարից:

Առավելագույն ծախս հայտարարագրել է իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը. բոլոր հայտարարագրված ծախսերի 53%-ը: Որևէ ծախս չի հայտարարագրել Հայաստանի Եվրոոպական կուսակցությունը: Ծախսի տեսանկյունից առաջին, երրորդ և չորրորդ տեղերում գտնվող ուժերը քվեարկությամբ արձանագրել են համապատասխանաբար 1-ին, 3-րդ և 4-րդ տեղերը: Ծախսվող գումարների և ստացված քվեների միջև ուղիղ կապ չի նկատվում:

ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺ	Ելք	Մուտք	Ընդհանուր ծախսից %	Ստացած քվեները %
1.«Հանրային ձայն» կուսակցություն	5035560	5041100	0,85%	9,68%
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	298618899	299377440	50,56%	32,57%
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	4604600	4610000	0,78%	1,12%
4.«Հաղթանակ» կուսակցություն	928200	950000	0,16%	1,71%
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	32389600	32400000	5,48%	0,74%
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	0	0	0,00%	1,11%
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	9114144	10432500	1,54%	18,89%
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	230000	250000	0,04%	0,34%
9.«Հանրապետություն» կուսակցություն	32972600	32972600	5,58%	11,32%
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	6774820	6980000	1,15%	0,55%
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	14698433	14700000	2,49%	1,80%
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	11333840	11350000	1,92%	1,01%

13.«Ապրելու երկիր» կուսակցություն	120719705	91093000	20,44%	3,64%
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	53163054	52409500	9,00%	15,45%
Ընդամենը	**590583455**	**562566140**	**100,00%**	**100,00%**

Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը ավագանի անցած ուժերի շարքում առաջին հորիզոնականն է զբաղեցնում նաև մեկ քվեի հաշվով քարոզչության վրա ծախսված գումարի տեսանկյունից: Առավել ապարդյուն ֆինանսական ծախսն արձանագրած ուժը՝ գումարի ծավալի և արձանագրած արդյունքի տեսանկյունից Ապրելու երկիր կուսակցությունն է:



Ընտրական օրենսգրքի և Կուսակցությունների մասին օրենքի բազմաթիվ փոփոխություններ առնչվում են քաղաքական ֆինանսավորմանը: Թե՛ կուսակցության ընթացիկ ծախսերը, թե՛ քարոզչության հետ կապված գործարքները պիտի իրականացվեն անկանխիկ եղանակով: Այս կանոնների խախտումը ենթադրում է վարչական (ՎԻՎՕ հոդված 40.3, հոդված 189.15) և քրեական (Քր.Օր. հոդված 221.1) պատասխանատվություն, նաև կարող է հանգեցնել կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելուն (ԸՕ հոդված 27):

Քաղաքական ֆինանսավորման թափանցիկության և հաշվետվողականության առումով որոշիչ է կուսակցությունների և ընտրություններին մասնակից ուժերի բարեխղճությունը: Առկա իրավական գործիքները սպառիչ չեն, իսկ ընթացիկ և նախընտրական ծախսերի փուլերը շարունակում են արհեստականորեն տարանջատված լինել միմյանցից՝ գտնվելով տարբեր մարմինների վերահսկողության տակ: Ավելին՝ երկու մարմինների կիրառած գործիքակազմը խիստ տարբեր է: Արդյունքում, օրինակ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության 2023թ. հուլիսին կայացած դրամահավաքի վերաբերյալ տեղեկատվության հարցմանը կուսակցությունը պատասխանել է, որ տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կիրապարակի տարեկան հաշվետվությամբ՝ 2024թ. մայիսին: Սա իհարկե անիմաստ է

ընտրությունների համատեքստում՝ տեղեկատվության հրատապության ու նշանակության տեսանկյունից:[9]

Նախընտրական քարոզչության ընթացքում եկարաժամկետ դիտորդները հարցազրույցներ են իրականացրել մասնակից ուժերի շտաբների ղեկավարների և թեկնածուների հետ: Ըստ առկա տվյալների՝ շտաբ չեն ունեցել Հաղթանակ և Միացյալ Հայաստան կուսակցությունները և Մայր Հայաստան դաշինքը: Մեկական շտաբ են ունեցել Հանրային ձայն, Հայաստանի Եվրոպական, Ազգային առաջընթաց, Հանուն սոցիալական արդարության և Ժողովրդավարական համախմբում կուսակցությունները: Ըստ շտաբների ղեկավարների՝ շտաբներից 12-ի տարածքը տրամադրվել է կուսակցությանն անհատույց օգտագործման: Դրանցից մեկը պատկանել է թեկնածուին, մյուսը կուսակցությանը:

ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺ	Անհատույց	Վարձակալությամբ	Հայտնի չէ	Ընդամենը
1.«Հանրային ձայն» կուսակցություն	0	1	0	1
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	5	12	0	17
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	2	0	0	2
4.«Հաղթանակ» կուսակցություն	0	0	0	0
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	0	3	0	3
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	1	0	0	1
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	1	0	0	1
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	1	0	0	1
9.«Հանրապետություն» կուսակցություն	1	1	0	2
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	0	0	0	0
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	1	1	0	2
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	0	0	1	1
13.«Ապրելու երկիր» կուսակցություն	0	7	1	8
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	0	0	0	0
Ընդամենը	12	25	2	39

Հարկ է նշել, որ Ընտրական օրենսգիրքը պահանջում է շուկայական արժեքով հայտարարագրել նաև անհատույց կամ շուկայական արժեքից ցածր գնով ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները: Ըստ այդմ, օրինակ թեև Հայաստանի եվրոպական կուսակցության կողմից որպես շտաբ օգտագործված տարածքը, ըստ շտաբի ղեկավարի, հատկացված է եղել անհատույց, դրա շուկայական արժեքը պիտի արտացոլված լիներ նախընտրական հիմնադրամի ծախսերում: Մինչդեռ ինչպես արդեն նշվեց, Հայաստանի եվրոպական կուսակցությունը որևէ ծախս չի հայտարարագրել:

[9] «Ժողովրդավար» ընտրություններ՝ չվերահսկվող և ոչ թափանցիկ նախընտրական ֆինանսներով, https://infocom.am/hy/article/118948

Ըստ հարցված շտաբների ղեկավարների, բոլոր այն դեպքերում, երբ տարածքն անհատույց չի տրամադրված, վարձակալության համար վճարվել է նախընտրական հիմնադրամից:

Դիտարկված շտաբների աշխատանքում ներգրավված անձանց թիվը խիստ տարբեր է: Միաժամանակ ընդհանուր քարոզչության դիտարկումը թույլ է տալիս պնդել, որ հավաքների ընթացքում կամ այլ քարոզչական աշխատանքներում ներգրավված են եղել ավելի շատ մարդիկ, որոնք պարտադիր չէ, որ առնչվեին որևէ կոնկրետ շտաբի հետ կամ մասնակցեին ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը: Այսինքն կային մարդիկ, որոնք ուղղակի ժամավճարով ծառայություն էին մատուցում՝ թռուցիկներ բաժանելու կամ թեկնածուներին ուղեկցելու տեսքով: Դիտարկված շտաբների աշխատանքներում թե՛ բացարձակ թվով, թե՛ համամասնորեն ավելի շատ մարդ ներգրավված է եղել Քաղաքացիական պայմանագիր և Ապրելու երկիր կուսակցությունների շտաբներում:

ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺ	**Ներգրավված անձանց թիվ**	**Դիտարկված շտաբերի թիվը**
1.«Հանրային ձայն» կուսակցություն	5	1
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	420	17
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	11	2
4.«Հաղթանակ» կուսակցություն	-	0
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	11	3
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	7	1
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	7	1
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	6	1
9.«Հանրապետություն» կուսակցություն	14	2
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	-	0
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	9	2
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	7	1
13.«Ապրելու երկիր» կուսակցություն	77	8
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	-	0
Ընդամենը	574	39

Ընդհանուր առմամբ, ըստ շտաբների ղեկավարների, մարդիկ ներգրավված են եղել առավելապես կամավորական հիմունքներով: Այս դեպքում բարդ է տարանջատել կամավոր հիմունքներով ներգրավված անձանց թիվը վճարովի հիմունքներով ներգրավվածներից: Ուստի աղյուսակում ներկայացված է այն շտաբների քանակով, որտեղից ստացվել է պատասխանը:

ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺ	Վճարովի և կամավոր	Կամավոր	Վճարովի	ԴՊ	Ընդամենը
1.«Հանրային ձայն» կուսակցություն	0	1	0	0	1
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	1	13	1	2	17
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	0	1	1	0	2
4.«Հաղթանակ» կուսակցություն	-	-	-	-	0
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	0	2	0	1	3
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	0	0	0	1	1
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	1	0	0	0	1
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	0	1	0	0	1
9.«Հանրապետություն» կուսակցություն	1	1	0	0	2
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	-	-	-	-	0
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	0	1	1	0	2
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	0	1	0	0	1
13.«Ապրելու երկիր» կուսակցություն	2	3	3	0	8
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	-	-	-	-	0
Ընդամենը	5	24	6	4	39

Քարոզչության դիտարկումից պարզ է դառնում, որ նույնիսկ եթե կուսակցությունը կամ դաշինքը պաշտոնական շտաբ չի ունեցել, այն ունեցել է աշխատանքների կազմակերպման տարածքներ որևէ ձևաչափով և այդ աշխատանքներում ներգրավված վարձու աշխատողներ, որոնց վերաբերյալ որևէ հաշվետվողականություն չի ապահովվել: Նախընտրական քարոզչության ընթացքի դիտարկումները ցույց են տվել քարոզչական աշխատանքներում վճարովի ներգրավվածության այլ փաստեր, որոնք ակնհայտորեն չեն հայտարարագրվել:[10] Զուգահեռաբար նաև շտաբների աշխատանքներում ներգրավված անձանց կողմից կամավորություն իրականացնելու մասին պնդումները քիչ հավանական են: Այսպես, Ուժը հայրենյաց կուսակցության երկու շտաբներում պնդել են, որ բոլորը կամավորական հիմունքներով են ներգրավված, իսկ մեկում դժվարացել են պատասխանել հարցին, մինդեռ Անկախ դիտորդի ներկայացուցիչները անձամբ ականատես են եղել դեպքի, երբ մի քանի անձ Ուժը հայրենյաց կուսակցության շտաբ եկել են հարցազրույցի՝ աշխատանքի մասին հայտարարության հիման վրա:

Որոշ դեպքերում նշվել է, որ կամավորներին վճարում են օրապահիկ կամ ապահովում են սննդով, սակայն այս դեպքերում էլ պարզ չէ, թե ինչպես ու ինչ միջոցներից է կատարվում վճարումը: Շտաբներում ներգրավված աշխատակիցներին պայմանագրի հիման վրա վճարելու մասին նշել են Քաղաքացիական պայմանագիր, Արդար Հայաստան, Հանրապետություն և Ապրելու երկիր կուսակցությունները: Ազգային Առաջընթաց կուսակցությունը նշել է, որ ունեն միայն մեկ գրանցված վճարվող աշխատակից, որին վճարում է կուսակցությունը:

[10] https://mamul.am/am/news/274471

Քարոզչության կազմակերպման համար նախատեսված ծախսերի վերաբերյալ թե՛ թեկնածուները, թե՛ շտաբների ղեկավարները նշել են, որ դրանք կատարվում են նախընտրական հիմնադրամից և կենտրոնացված կերպով:

Հարցված թեկնածուներից 28-ը հայտնել են, որ նվիրատվություն են կատարել քարոզչության իրականացման համար: Կուսակցությունների մասին օրենքը սահմանում է, որ ֆիզիկական անձը կուսակցությանը մեկ տարվա ընթացքում կարող է կատարել առավելագույնը 2,5 մլն նվիրատվություն: Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ ֆիզիկական անձը կարող է Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամին կատարել առավելագույնը 100 հազար դրամ նվիրատվություն, իսկ թեկնածուն՝ մինչև 1 մլն դրամ: Թե՛ կուսակցությանը, թե՛ նախընտրական հիմնադրամին նվիրատվությունները կատարվում են անկանխիկ: Անանուն նվիրատվություններն արգելվում են: Սա ենթադրում է, որ կուսակցության ներկայացրած հայտարարագրերում պետք է հստակ արձանագրված լինի յուրաքանչյուր նվիրատուի կատարած նվիրատվությունը: Նվիրատվություն կատարելու մասին նշած 28 թեկնածուներից 12-ը հրաժարվել է նշել նվիրաբերած գումարի չափը, 3-ը դժվարացել է դա անել: 1 թեկնածու (Ազգային առաջընթաց) նշել է այնպիսի գումար, որը գերազանցում է թե՛ կուսակցությանը, թե՛ նախընտրական հիմնադրամին կատարվող նվիրատվության առավելագույն չափը: Դատելով կուսակցության նախընտրական հիմնադրամի հայտարարագրից՝ գումարը տրվել է կուսակցությանը, սակայն պարզ չէ, թե ինչպես է այն ձևակերպվել:

	Նվիրաբերվող գումարի չափը							
ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺԵՐ	**<499000**	**500000-999000**	**1000000**	**2000000**	**4000000**	**ԴՊ**	**ՀՊ**	**ԸՆԴ**
1.«Հանրային ձայն» կուսակցություն		1				1		2
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	2					1	2	5
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	1		1					2
4.«Հաղթանակ» կուսակցություն							2	2
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն							1	1
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»								0
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	1	2			1		1	5
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն								0
9.«Հանրապետություն» կուսակցություն								0
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն			1				1	2
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն						1	1	2
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն		1					3	4
13.«Ապրելու երկիր» կուսակցություն				1			1	2

Միաժամանակ տարբեր կուսակցությունների թեկնածուներ նշել են, որ ի լրումն հիմնադրամին իրականացրած նվիրատվությանը, հաճախ կամ հազվադեպ իրականացնում են նաև ուղղակի ծախսեր շտաբի աշխատանքների կազմակերպման, տրանսպորտի և այլ կարիքների համար:



Դիտարկումների հիման վրա կարող ենք պնդել, որ թե՛ ֆինանսական միջոցների ներգրավման, թե՛ դրանց ծախսման առումով հայտարարագրման ու հաշվետվողականության սկզբունքները չեն

գործում և չեն պահպանվում՝ ինչպես կուսակցությունների անհիրազեկվածության, այնպես էլ միտումնավոր թաքցնելու պատճառով, ինչն էլ արդյունքն է իրավասու մարմինների անգործության:

Վարչական ռեսուրսի օգտագործում

Մինչև թեկնածուների առաջադրումը Անկախ դիտորդ դաշինքը հանդես է եկել հրապարակումներով, որոնցում ներկայացրել է պաշտոնական գործառույթների լուսաբանման քողի տակ Տիգրան Ավինյանի օգտին մեդիառեսուրսների անհամաչափ օգտագործման մասին[11], ինչպես նաև՝ որպես աշխատանքային հանձնարարություն կատարվող քարոզչության և ընտրողների ցուցակագրման գործընթացը Սպիտակ խոշորացված համայնքի համայնքապետարանի աշխատակազմի օրինակով:[12] ***Վերջինիս դեպքում արարքը ընտրական օրենսդրության տեսանկյունից վարչական ռեսուրսի չարաշահում չէ, սակայն պետք է գնահատվի քրեական օրենսդրության տիրույթում՝ որպես պաշտոնատար անձի լիազորությունների չարաշահում:***

Ականատես դիտորդական առաքելությունն ուսումնասիրել է նախընտրական փուլում Երևանի համայնքապետարանին աննախադեպ ծավալի պետական հատկացումները և «վարչական շրջանի օր» միջոցառումները, որոնք ըստ էության համայնքային բյուջեի ու ռեսուրսների հաշվին կազմակերպված մշակութային միջոցառումներ էին, որոնք ուղեկցվում էին քարոզչությամբ: Քանի որ Ականատեսը ծավալուն անդրադարձ է կատարել խնդրին իր վերջնական զեկույցում, Անկախ դիտորդը դրան չի անդրադառնում:[13]

Անկախ դիտորդն առանձին հրապարակումներով անդրադարձել է նաև սեպտեմբերի 15-ին Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ամփոփիչ հավաքին վարչական ռեսուրսի օգտագործմամբ մասնակցության ապահովմանը:[14]

Նախընտրական քարոզչության ընթացքում Անկախ դիտորդի երկարաժամկետ դիտորդները արձանագրել են Քաղաքացիական պայմանագիր կուսակցության կողմից վարչական ռեսուրսի չարաշահման 11 դեպք, որոնցից

- 3-ը առնչվում է աշխատանքային ժամին Աջափնյակ համայնքում թաղապետարանի աշխատակազմի քարտուղարի և այլ աշխատակիցների մասնակցությանը քարոզչությանը՝ այն դեպքում, երբ թե՛ քարտուղարը, թե՛ աշխատակիցների մի մասը արձակուրդում չեն գտնվել:
- 3 դեպք առնչվում է հավաքի մասնակցելու պարտադրանքին և մեկը՝ քարոզչության իրականացման խոչընդոտմանը: Հավաքին մասնակցելու

[11] Վարչական ռեսուրսների չարաշահմամբ անհավասար հնարավորությունների ձևավորումը խախտում է ժողովրդավարական սկզբունքները՝ https://hcav.am/22-08-2023independentobservermediamonitoring/

[12] ՔՊ-ն, այլ համայնքների վարչական ռեսուրսն օգտագործելով, ձայներ է հավաքում Երևանի ընտրությունների համար՝ https://hcav.am/ind-obs-21-07-2023-statement/

[13] Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց https://transparency.am/hy/publication/pdf/354/10888 , էջ 15

[14] Քաղաքացիական պայմանագիր կուսակցության սեպտեմբերի 15-ի երթը https://www.facebook.com/AnkakhDitord/posts/pfbid02zqFPffLrKJV9cCnefq5abr5tYVrkAg5Nj5juQ8zDpeAP6VnZ6S5LjMEz7yGx8qfcl

պարտադրանքն այս դեպքերում զուգորդվում է վարչական լծակների օգտագործմամբ, երբ աշխատանքային կոլեկտիվները հավաքին մասնակցել են կազմակերպված կերպով և ակնհայտորեն ոչ սեփական կամքով: Սեպտեմբերի 15-ին դիտարկված հավաքում այդ մասնակիցների զգալի բաժինն էին նաև մարզերի տարբեր կառույցներից բերված անձինք: Սեպտեմբերի սկզբին հավաքի խոչընդոտման դեպք է գրանցվել Ավան վարչական շրջանում, որտեղ «Ապրելու երկիր» կուսակցության ներկայացուցիչներին Ծարավ Աղբյուր թաղամասի համատիրության նախագահը հայտնել է, որ արգելում է շրջել շենքերով, զրուցել բնակիչների հետ կամ տարածել քարոզչական նյութեր: Նա նաև համատիրության տեխնիկական աշխատակցին հրահանգել է, որ պոկի դռների մոտ ստիկերներով փակցված բուկլետները: Հետաքրքրական է, որ Ապրելու երկիր կուսակցության նախընտրական հիմնադրամի հայտարարագրի համաձայն, Ծարավ աղբյուր համատիրությանը հետագայում վճարվել է 15000 դրամ գովազդի տեղադրման համար: Այնումենայնիվ բավարար տեղեկություն առկա չէ եզրակացնելու, որ խոչընդոտելը պայմանավորված է եղել չվճարելու, թե այլ հանգամանքով:

- Ծառայության կամ բնամթերքի տեսքով ընտրակաշառքի 3 դեպք, այս դեպքերից 2-ը արձանագրվել են Դավթաշեն և Աջափնյակ վարչական շրջանում, սակայն նույնանման վկայություններ կան նաև այլ վարչական շրջաններից, երբ թաղապետերը և թաղապետարանների աշխատակիցները բակային հանդիպումների ընթացքում հավաքագրում են կարճ ժամանակահատվածում լուծվող խնդիրները՝ աղբամանների և նստարանների տեղադրում և այլն, ապա ապահովում դրանց լուծումը: Մեկ դեպքում համացանցում հրապարակված տեսանյութից երևում է, որ Քաղաքացիական Պայմանագրի քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը քաղաքացիների խնդրանքով հեռախոսազանգով հրահանգում է երկարեցնել հանրային տրանսպորտի երթուղին:
- Վարչական ռեսուրսի հետ առնչվող վերջին դեպքը Ազգային առաջընթաց կուսակցությունից ստացած տեղեկությունն է, ըստ որի իրենց թեկնածուներից մեկին հարկադրել են արձակուրդ մեկնել՝ իր քաղաքական հայացքների պատճառով: Սակայն, Անկախ դիտորդին չի տրամադրվել տեղեկություն, թե որ կառույցի մասին է խոսքը:

Հավաքների դիտարկման արդյունքներ

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Անկախ դիտորդի երկարաժամկետ դիտորդները դիտարկել են 81 հավաք[15], որոնցից

- 2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 21 հավաք
- 14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք - 11 հավաք
- 13.«Ապրելու երկիր» կուսակցություն - 10 հավաք
- 3.«Արդար Հայաստան» կուսակցություն - 8 հավաք
- 9.«Հանրապետություն» կուսակցություն - 8 հավաք
- 11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն - 6 հավաք
- 10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն - 4 հավաք
- 12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն - 4 հավաք
- 4.«Հաղթանակ» կուսակցություն - 3 հավաք
- 5.«Ուժը Հայրենյաց» կուսակցություն - 3 հավաք
- 7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն - 3 հավաք

Որևէ հանրային հավաք չեն կազմակերպել.

- 1.«Հանրային ձայն» կուսակցություն
- 6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»
- 8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն

Նախընտրական քարոզարշավի ընթացքում դիտարկված հավաքները հիմնականում սակավամարդ բակային հանդիպումներ են եղել, որոնց մասնակիցների գերակշռող մասը եղել են կուսակցության ներկայացուցիչները և թիմակիցները: Տարբեր հանդիպումների երկարաժամկետ դիտարկումը ցույց է տվել նաև, որ նույնիսկ թվացյալ կողմնակի մասնակիցներն իրականում շտաբի աշխատակից են հանդիսանում, հրավիրվել են հավաքի վարչական լծակների օգտագործմամբ կամ վճարի դիմաց ուղեկցում են քարոզչություն իրականացնողներին:

Քաղաքացիական պայմանագրի հավաքներն աչքի են ընկել վարչական ռեսուրսի կիրառմամբ հստակ նախապատրաստվածությամբ: Հավաքի մասնակիցների ու բնակիչների ներկայությունն ապահովվել է թաղապետարանների միջոցով: Երթուղին նախատեսվել է ըստ իրականացրած բարեկարգման աշխատանքների վայրերի: Հավաքներին ներկա են եղել, թե թաղապետարանների, թե այլ ՀՈԱԿ-ների աշխատակիցներ: Համայնքապետարանի և թաղապետարանի աշխատակիցների արձակուրդի վերաբերյալ Անկախ դիտորդի անդամ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցման պատասխանը ստացվել է ընտրությունների ավարտից հետո: Նորք-Մարաշ և Կենտրոն վարչական շրջաններից պատասխան չի ստացվել: Սրա արդյունքում բարդ է հետադարձ կերպով գնահատել, թե արդյոք հավաքներին մասնակցած անձինք գտնվել են արձակուրդում: Հստակ է միայն, որ վարչական շրջանների բոլոր ղեկավարները գտնվել են արձակուրդում, սակայն քարոզչության ընթացքում ըստ էության կատարել են նաև իրենց լիազորությունները, բակային հանդիպումների ժամանակ տվել են հրահանգներ իրենց աշխատակազմին, որը գրեթե բոլոր հանդիպումների ժամանակ ուղեկցել է նրանց՝ նաև աշխատանքային ժամերին: Քաղաքացիական պայմանագրի

[15]Հարկ է նշել, որ միևնույն վարչական շրջանում միևնույն օրվա դիտարկման ընթացքում բակային հանդիպումների շարքը համարվել է մեկ հավաք և տվյալներն արձանագրվել ու ներկայացվում են զեկույցում որպես մեկ միավոր:

շտաբներում իրականացված դիտարկումները ևս ցույց են տվել, որ դրանց աշխատանքները հիմնականում համակարգվել են թաղապետարանների կողմից, որոնք էլ նախընտրական քարոզչության ընթացքում իրականացրել են բակային բարեկարգումներ և այլ աշխատանքներ, որոնք ըստ էության ***վարչական ռեսուրսի օգտագործմամբ ընտրակաշառք են հանդիսանում***: Դիտորդները գնահատել են հանրային հավաքին մասնակցությունը որպես կամավոր կամ ոչ կամավոր՝ հաշվի առնելով մասնավորապես հավաքին ժամանելու և հեռանալու ձևը, վերահսկողության, հրահանգման փաստերը, զրույցները կամ մասնակիցներից ստացված տեղեկատվությունը: Այս գնահատման արդյունքում Քաղաքացիական պայմանագիր կուսակցության հավաքների մասնակիցների միջև ոչ կամավոր մասնակցողների ներկայության դեպքերի առումով կուսակցությունը գերազանցել է մրցակիցներին թե՛ բացարձակ թվերի, թե՛ տոկոսային հարաբերակցության առումով:

Արդյոք հավաքի մասնակիցները կամավոր են մասնակցել հավաքին

Երևանի ավագանու ընտրություններ 2023



Հավաքների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում եղել է անտարբեր: Միաժամանակ, դիտորդները արձանագրում էին դեպքեր, երբ հենց քաղաքական ուժերը հետաքրքրված չէին երթերի ժամանակ քաղաքացիների հետ շփվելով և, ըստ էության, սահմանափակվել են ուղղակի տեսանելիություն ապահովելով: Մասնավորապես խոսքը վերաբերում է Ուժը հայրենյաց և Հանուն սոցիալական արդարության կուսակցություններին և «Մայր Հայաստան» դաշինքին:

Ինչպիսին էր հավաքի մթնոլորտը

Երևանի ավագանու ընտրություններ 2023



Դիտարկված հավաքների ընթացքում կուսակցությունների քարոզչության ուղղությունները տարբեր էին: Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը առավելապես փորձում էր խոսել քաղաքապետարանի կողմից իրականացվող աշխատանքի, Երևանի խնդիրների, ծրագրի մասին, և միայն որպես բացառություն

անդրադառնում էր այլ թեմաների՝ հիմնականում մրցակիցների քննադատությանը: Հանրապետություն կուսակցությունը ավելի հավասարակշռված էր անդրադառնում քաղաքականությանը և չէր խուսափում նաև Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկումներից: Ի հակադրություն ինչպես՛ վերոնշյալ երկու, այնպես էլ մյուս կուսակցությունների քարոզչական մարտավարությանը, «Մայր Հայաստան» դաշինքը առավել հաճախ անդրադարձել է ԼՂ և անվտանգային խնդիրներին, քննադատել մրցակից ուժերին և խիստ հազվադեպ է անդրադարձել սեփական ծրագրին:



Հավաքների ընթացքում մասնակիցների հետ իրականացված հարցումներից պարզ է դառնում, որ նրանք հավաքին մասնակցում են որպես տվյալ ուժի աջակից և ակնկալիքները համահունչ են քաղաքական ուժի խոսույթին: Օրինակ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության հավաքի մասնակիցների կողմից նշված խնդիրները վերաբերում են մրցակից քաղաքական ուժերի բացառմանը, իսկ օրինակ Մայր Հայաստան դաշինքի հավաքների մասնակիցները՝ որպես կարևորագույն խնդիր նշում էին իշխանափոխությունը և Արցախի շուրջ տեղի ունեցող գործընթացները:

Ընդհանուր դիտարկումներից պարզ է դառնում, որ չնայած առկա բևեռացվածությանը՝ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ հավաքների ընթացքում ատելության խոսքը և ընդհանուր անհանդուրժողականությունն առավել քիչ են եղել և դրանց մենաշնորհին ըստ էության պատկանել է «Մայր հայաստան» դաշինքին: Միաժամանակ նկատվել են նաև այլ խնդրահարույց երևույթներ՝ սպառնալիք, օգնության/օժանդակության խոստումներ (որը կարող է մեկնաբանվել որպես ընտրակաշառք), վարչական ռեսուրսի չարաշահման մասին վկայություններ:

Հավաքների ընթացքում երբեմն հնչել են սպառնալիքներ, օգնության/օժանդակության խոստումներ, որոնք կարող են մեկնաբանվել որպես ընտրակաշառք, վարչական ռեսուրսի չարաշահման մասին վկայություններ, ատելության խոսք/մեղադրանքներ/վիրավորանք: Ընտրական օրենսդրության խախտումներ պարունակող ելույթները հավաքների ժամանակ էականորեն գերակշռել են են երկու ուժերի դեպքում՝ Քաղաքացիական պայմանագիր և Մայր Հայաստան:



Արձանագրված այլ խախտումներ

Երկարաժամկետ դիտարկման ընթացքում ամենից հաճախ արձանագրված խախտումներն առնչվում են քարոզչական տպագիր նյութերին, մասնավորապես՝ քարոզչական պաստառների փակցման կանոնների խախտումներ (18 արձանագրում), քարոզչական պաստառների վնասում (16 արձանագրում), տպագիր նյութերի վավերապայմանների (թվաքանակ և պատվիրատու) խախտում (8 արձանագրում):

Բացի նախորդիվ նշված վարչական ռեսուրսի կիրառմամբ ընտակաշառքի դեպքերը դիտորդների կողմից արձանագրվել է ծառայությունների կամ ապրանքների տրամադրման ևս 5 դեպք, որոնցից 2-ը՝ Քաղաքացիական պայմանագրի կողմից, 2-ը՝ Ուժը Հայրենյաց և 1-ը՝ Մայր Հայաստան կուսակցությունների դաշինքի կողմից:

- Նորք-Մարաշի բակերից մեկում հավաքի ժամանակ Քաղաքացիական պայմանագրի քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը բակի երեխաներին բաժանել է 10-12 ֆուտբոլային գնդակներ, որոնց վրա գրված է եղել 2 թիվը: Կուսակության տարբերանշանով խորհրդանշական նվերների արժեքը չի կարող գերազանցել 3000 դրամը, մինչդեռ տվյալ որակի գնդակների շուկայական արժեքը տատանվում է 4000-5000 դրամի սահմաններում:
- Արաբկիր համայնքում Քաղաքացիական պայմանագրի հետ հանդիպումը ուղեկցվել է թաղապետի կողմից հյուրասիրության կազմակերպմամբ:
- Աջափնյակ վարչական շրջանում քարոզչություն իրականացնելու ընթացքում Ուժը Հայրենյաց կուսակցության ներկայացուցիչ Տիգրան Արզաքանցյանը խոստացել է իր հիմնադրամի միջոցներով ավարտին հասցնել Բաշինջաղյան փողոցի բակերից մեկում գտնվող եկեղեցու կառուցումը: Ընտրություններից հետո եկեղեցու կառուցումն ավարտելու մասին տեղեկությունները բացակայում են:
- Նույն կուսակցությունը Հյուսիսային պողոտայում քարոզչության ընթացքում բաժանել է փակ միջոցառման հրավիրատոմսեր: Ըստ առկա տեղեկատվության այդ միջոցառմանը նախատեսվում էր նաև նվերների տրամադրում:
- Մայր Հայաստան կուսակցությունների դաշինքը Կենտրոն համայնքում

դահլիճային հանդիպման ժամանակ բաժանել է Գոյ թատրոնի տոմսեր: Անկախ դիտորդը պարզել է, որ տոմսերի վրա նշված է եղել, որ գինը 2000 դրամ է, մինչդեռ իրականում ներկայացման տոմսերը եղել են 3000 դրամ և դաշինքը, դրանք ամբողջությամբ ձեռք բերելով թատրոնից, տպել է այլ տոմսեր և նշել ավելի փոքր գումար: Տոմսերը որևէ տարբերանշան չեն ունեցել, որ կարող էր ասոցացվել դաշինքի հետ, ըստ այդմ չեն կարող համարվել խորհրդանշական նվեր՝ անկախ գումարի չափից:

Ընտրական գործընթացների նկատմամբ վստահությունը և ընկալումները

Երկարաժամկետ դիտորդության ընթացքում հարցված թեկնածուները և շտաբների ղեկավարները՝ որպես արդեն արձանագրված խախտումներ նշել են թե՛ օրենքով արգելված, թե՛ չարգելված, սակայն ընդհանուր ընկալման մեջ խախտում համարվող գործողություններ: Այսպես ՝ որպես խախտում առաջին հերթին նշվում է իշխող Քաղաքացիական պայմանագրի կողմից վարչական ռեսուրսի չարաշահումը, որն արտահայտվում է պետական աջակցությամբ համայնքային բարեկարգումներ իրականացնելով, հավաքներին ընտրողների մասնակցությունն ապահովելով և մինչև քարոզչության մեկնարկը առավել շատ լուսաբանումով: Նշվող մյուս խախտումը պաստառների վնասումն է և չսահմանված վայրերում փակցնելը: Ընդ որում այս խախտումը հաճախ նշվել է որպես բոլորի՝ այդ թվում դրա մասին բարձրաձայնող ուժի կողմից կատարվող խախտում: Որպես խախտում բարձրաձայնվել են նաև այլ երևույթներ, որոնք օրենքի տեսանկունից խախտում չեն: Դրանցից առաջինը քարոզչության օրենքով սահմանված ժամկետից շուտ քարոզչություն սկսելն է, հակաքարոզչություն/ապատեղեկատվությունը և երեխաներին ներգրավելը քարոզչական հավաքներին: Այսպիսով, արդեն տեղի ունեցած խախտումների տեսանկյունից շտաբների ղեկավարների և թեկնածուների ընկալումները առավելապես միանման են: Միաժամանակ, հարցին, թե ինչ խախտումների վտանգ են տեսնում, հարցվող թեկնածուները և շտաբների ղեկավարները շատ ավելի տարբերվող պատասխաններ են տվել: Հարցին պատասխանելիս հարցվողները կարող էին ընտրել երեք տարբերակներից մեկը՝ իշխանության, ընդդիմության կամ այլ ուժի կողմից և ցանկության դեպքում նշել, թե կոնկրետ որ ուժն են նկատի ունեցել:

Ինչպիսի խախտումների վտանգ են տեսնում շտաբների ղեկավարները և ում կողմից

Երևանի ավագանու ընտրություններ 2023





Այս պատասխանների համադրությունն ընտրությունների նկատմամբ վստահության ամենացածր ցուցանիշն է հեղափոխությունից ի վեր: Անվստահության մասին է վկայում հատկապես այն, որ թե՛ շտաբների ղեկավարները, թե՛ թեկնածուները նշել են բազմաթիվ խախտումների հավանականության մասին, որոնք փաստացի իրենց կողմից չեն նշվել որպես արդեն իսկ արձանագրված կամ նկատված: Միաժամանակ հրապարակային խոսույթում հնարավոր և արձանագրված խախտումների մասին դիտարկումները առավել շատ ծառայել են որպես քարոզչական գործիք և ընտրությունների լեգիտիմությունը հանրայնորեն կասկածի տակ դնելու հնարավորություն, իսկ դրանց համար իրավական պատասխանատվության փորձեր իրականացվել են միայն դիտորդական կազմակերպությունների կողմից:

Դիտարկման ընթացքում հարցված ընտրատարածքային և տեղամասային (անկախ նշանակող խմբակցությունից) ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչներն առավել վստահաբար պնդել են, որ խախտումներ չեն լինելու կամ լինելու են աննշան խախտումներ, որոնք չեն կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Քվեարկության օրն անցակցված հարցման ընթացքում 624 ընտրողներից 586-ը նշել են, որ լսել են որևէ խախտման մասին քարոզչության ընթացքում և քվեարկության օրը:

Պատասխաններից ստացված պատկերը հետևյալն է:



Խախտումների գերակշիռ մասը վերագրվել է իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցությանը: Ընդդիմադիր այլ ուժերից հիմնականում նշվել են Մայր Հայաստան դաշինքը և Ապրելու երկիր կուսակցությունը:

Ընդհանուր առմամբ ընտրությունների նկատմամբ վստահությունն էականորեն ցածր է նույնիսկ 2021թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համեմատությամբ, երբ անվստահությունը պատճառաբանվում էր քաղաքական անկայունությամբ, իշխանության հնարավոր զավթմամբ, արտաքին ուժերի միջամտությամբ և այլ դիտարկումներով:



Ընտրությունների հանդեպ անվստահության բարձր մակարդակի հետ մեկտեղ, որոշ իմաստով հակասելով, նկատվում է ընտրություններին մասնակցողների կողմից ընտրությունների ինստիտուտի ազդեցության կարևորումը:



Արդյո՞ք ընտրությունները կարտացոլեն ընտրողների կամքը	Ինչպես կփոխվի Երևանի կյանքը				
	դեպի լավը	կախված է նրանից, թե ով կընտրվի	անփոփոխ կմնա	դեպի վատը	ԴՊ
ընտրությունները կանցնեն առանց խախտումների	96	51	20	4	8
ընտրախախտումներ կլինեն, սակայն դրանք ազդեցություն չեն ունենա արդյունքների վրա	73	107	36	6	16
ընտրությունների արդյունքները կկեղծվեն	8	56	34	15	1
ԴՊ	23	41	13	2	12

Ընտրությունների կազմակերպումը

Ընտրական հանձնաժողովներ

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախկին կազմերի լիազորությունները դադարել են 2022թ. նոյեմբերին, իսկ նոր հանձնաժողովները ձևավորվել են 2022թ. դեկտեմբերին:
Երևան քաղաքի 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների 70 անդամներից 17-ը հանձնաժողովի կազմում եղել են նախկինում: Նրանցից 2-ը հանդիսացել են միևնույն հանձնաժողովի նախագահ: 1 նախագահ եղել է այլ հանձնաժողովի կազմում, իսկ մյուս 7 նախագահները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում լինելու փորձառություն չեն ունեցել:

Այսպիսով Երևանի ավագանու ընտրություններն առաջին փորձառությունն էին հանձնաժողովների 53 անդամի, այդ թվում 7 նախագահի համար:

Երևանի ավագանու ընտրությունների համար ձևավորվել է 475 տեղամասային ընտրական հանձնաժողով, որի 3800 անդամները հավասարապես ներկայացվել են ԱԺ երեք խմբակցությունների և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից: Հանձնաժողովների նախագահների և քարտուղարների բաշխումը իրականացվել է հետևյալ համամասնությամբ



Տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընգրկված անձանցից 1450-ը ընտրական հանձնաժողովում ընգրկված է եղել նաև 2021թ. ԱԺ արտահերթ ընտրությունների ժամանակ, որից 1058-ը նույն կարգավիճակով:



Երկարաժամկետ դիտարկման ընթացքում դիտորդները հարցազրույցներ են իրականացրել տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների հետ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի հարցված 28 անդամներից միայն մեկն է նշել, որ չի վերապատրաստվել: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամները առավել բարձր են գնահատել իրենց պատրաստվածությունը և համեմատաբար ավելի ցածր տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների պատրաստվածությունը:

Քվեարկության օրը հանձնաժողովի նիստը դիտարկելով՝ դիտորդներն արձանագրել են, որ 105 տեղամասերից 5-ում պատշաճ չի իրականացվել գործառույթների բաշխումը, իսկ 9-ում հերթափոխը պատշաճ չի պահպանվել օրվա ընթացքում: 15-ում նախագահի գործառույթների իրականացմանը միջամտել են այլ անձինք: 10-ում պաշտաճ չի պահպանվել հանձնաժողովի նիստի ընթացակարգը: 105 տեղամասերից 12-ում հանձնաժողովի նիստի ընթացքում գրանցվել է միջադեպ:

Քվեարկության օրվա ընթացքում դիտարկված 455 տեղամասերից 30-ում դիտորդները գնահատել են, որ հանձնաժողովը բավարար չի տիրապետում ընթացակարգերին, իսկ 3-ում՝ ընդհանրապես չի տիրապետում:

Տեղամասերից 31-ում հանձնաժողովը բավարար չի վերապատրաստվել հաշմանդամություն ունեցող ընտրողներին աջակցելու համար, իսկ 17-ում նշել է, որ ընդհանրապես չի վերապատրաստվել այս թեմայով: Տեղամասերից 18-ում հանձնաժողովը բավարար պատրաստակամություն չի դրսևորել խախտումները վերացնելու համար, իսկ 4-ում ընդհանրապես որևէ պատրաստակամություն չի դրսևորել:

Ձայների հաշվարկն ու քվեարկության ամփոփումը հիմնականում ընթացել են առանց խնդիրների: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում իրականացված դիտարկման ընթացքում նկատվել է, որ ջնջումներ ու տեխնիկական լրացումներ առկա է տեղամասերի 6%-ի արձանագրություններում և քաղվածքներում:

Տեղամասերի կահավորում և մատչելիություն

Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ Անկախ դիտորդը մի շարք առաջարկություններով դիմել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ՀՀ

արդարդատության նախարարությանը և ՀՀ վարչապետի աշխատակազմին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացված կարևոր հարցերից մեկը վերաբերում է մատչելիության ապահովմանը: ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 17-ը սահմանում է չափանիշեր, որոնց համաձայն պիտի ընտրվի տեղամասային կենտրոնը և քվեարկության սենյակը: Մասնավորապես հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի մատչելիության, լուսավորության և հանձնաժողովի բնականոն աշխատանքի ապահովման լրացուցիչ պահանջները: Համապատասխան օրինակելի ձևի միջոցով ընտրական հանձնաժողովը տեղեկատվություն է հավաքում տրամադրված տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների մատչելիության մասին: Այդ տեղեկությունները ամփոփ և մատչելի տարբերակով հրապարակվում են ԿԸՀ կայքում: Այս տեղեկատվության առաջնային շահառուներն են հաշմանդամություն ունեցող ընտրողները, որոնց համար տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի մատչելիությունը կարող է էական հանգամանք լինել՝ իրենց ընտրական իրավունքն իրացնելու տեսանկյունից: Ընտրական օրենսգրքի հոդված 10-ի 3.1 մասով հենաշարժական խնդիրներ ունեցող ընտրողներին հնարավորություն է ընձեռնվում փոխել իրենց քվեարկության տեղամասը, եթե ըստ հաշվառման վայրի իրենց սպասարկող տեղամասային կենտրոնում քվեարկությունը հնարավոր չէ անմատչելիության պատճառով: 2022-2023թթ. ընթացքում ՏԻՄ ընտրությունների դիտորդության արդյունքները ցույց են տալիս, որ որպես կանոն, ԿԸՀ կայքում հրապարակվող տեղեկատվությունը չի համապատասխանում տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների փաստացի վիճակին: Ըստ էության, այդ տեղեկատվությունը ճշգրիտ չէ և հենաշարժական խնդիրներ ունեցող ընտրողը, որը հետևողականորեն կուսումնասիրի ԿԸՀ կայքում հրապարակված մատչելիության վերաբերյալ տեղեկատվությունը և կներկայացնի մեկ այլ տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու դիմումը, ամենայն հավանականությամբ որոշում կկայացնի ոչ օբյեկտիվ տեղեկատվության հիման վրա:

Նախորդ ՏԻՄ ընտրություններում արձանագրվել է, որ ընտրական հանձնաժողովների բարեխիղճ աշխատանքի, ՔՀԿ-ների հետևողականության դեպքում երբեմն առանձին տեղամասային կենտրոններում իրականացվում են սահմանափակ աշխատանքներ, որոնք բարելավում են մատչելիության վիճակը, սակայն համայնքների ղեկավարները, որոնք վերոնշյալ օրինակելի ձևի միջոցով ներկայացնում են տեղամասային կենտրոնների ցուցակը, իմացությամբ կամ չիմացությամբ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն են ներկայացնում և մակերեսորեն են մոտենում մատչելիության ապահովման խնդրին: Ավելին, Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պետք է ստուգի տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի համապատասխանությունը ընտրական օրենսգրքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած պահանջներին, սակայն դիտարկման արդյունքում պարզվում է, որ ԸԸՀ-ները հիմնվում են համայնքի ղեկավարի ներկայացրած տեղեկատվության վրա՝ առանց այն ստուգելու:

Ըստ այդմ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին առաջարկվել է.

- Վերանայել օրինակելի ձևը՝ դարձնելով այն ավելի դյուրին՝ լրացնելու և թվայնացնելու տեսանկյունից:

- Օրինակելի ձևում պարտադիր դարձնել ներկայացված տեղեկատվությունն ապացուցող լուսանկարի տրամադրումը, որոնք կհրապարակվեն ԿԸՀ կայքում տեղամասային կենտրոնի մատչելիության վերաբերյալ տեղեկատվության հետ:
- ԸԸՀ-ի համար հստակեցնել, որ յուրաքանչյուր տեղամասային կենտրոն պետք է պարտադիր ստուգվի տեղում՝ մինչև հաստատումը:
- Քվեասենյակի կահավորման ուղեցույցում (եթե առկա է, եթե ոչ՝ մշակել) ավելացնել քվեասենյակի մատչելիության հստակեցումներ, մասնավորապես՝ քվեախցիկի պատից հեռավորության և ընտրողի երթուղին անխոչընդոտ դարձնելու նպատակով:
- Ձեռք բերել ամուր և ավելի լայն քվեախցիկներ՝ ստեղծելով կարիքի դեպքում դրանցում հենվելու հնարավորություն և ապահովել, որպեսզի քվեաթերթիկների մեծ թվի դեպքում, ընտրողին հարմար լինի դրանք ուսումնասիրել քվեախցիկի ներսում:
- Բրայլյան կաղապարները պատրաստելիս համագործակցել մասնագիտացված ՀԿ-ների հետ, ապահովելու համար էջերի ճիշտ համարակալումը:
- Տրամադրել ՏԸՀ-ներին նաև խոշորացույց ոսպնյակներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատասխանել է, որ «Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ իրականացրել է բոլոր (2021 թ. Աժ ընտրությունների ժամանակ ձևավորված) ընտրատեղամասերի քարտեզագրում՝ վեր հանելու տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի մատչելիությանը, լուսավորությանը, տեսախցիկների տեղադրման և հանձնաժողովի բնականոն աշխատանքի հարմարավետությանը վերաբերող խնդիրները: Հավաքագրված տվյալները ԸԸՀ-Ի և ԿԸՀ-ի կողմից կկիրառվի որպես լրացուցիչ գործիք՝ վաչական շրջանների կողմից ՏԿ-ի մատչելիության վերաբերյալ տրամադրված տեղեկատվության ստուգման, խնդիրների վերանայման և հասցեական լուծումներ տալու համար:
Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշել է, որ Երևանի ավագանու ընտրությունների համար կպատրաստվեն նոր բրայլյան կաղապարներ՝ տեխնիկական թարմացմամբ և բազմակի օգտագործման հնարավորությամբ: Սա, ընտրական գործընթացները և ԿԸՀ կայքը տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի դարձնելու հարցերը քննարկվել են ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի և Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հայաստանյան գրասենյակի հետ: Առաջարկություններում նշված մյուս հարցերն ըստ էության մնացել են հետագա կարգավորման:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տեղեկության համաձայն Երևան քաղաքի 475 տեղամասերից շուրջ 180-ն (38%) են մատչելի եղել հենաշարժական խնդիրներ ունեցող ընտրողների համար: Դիտարկումների ընթացքում պարզ է դարձել, որ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ փոփոխվել է մի շարք տեղամասային կենտրոնների կահավորանք: Որոշ դեպքերում քվեարկության սենյակները 2-րդ հարկից տեղափոխվել են 1-ին հարկ՝ առավել մատչելիություն ապահովելու համար: Քվեարկության օրվա «Անկախ դիտորդի» դիտարկումները բացահայտել են գրեթե նույն պատկերը: ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ քվեարկության օրվանից մինչև 12 օր առաջ ընտրողները կարող են դիմել լիազոր մարմնին (ՀՀ ՆԳՆ անձնագրային բաժիններ) իրենց հաշվառման վայրի ընտրողների

ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց ընտրությամբ մատչելի տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար: ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն, այլ տեղամասում քվեարկելու հնարավորության համար դիմել է միայն 1 ընտրող: Այս ցուցանիշը խոսում է այն մասին, որ մատչելի տեղամասում քվեարկելու հնարավորության մասին պատշաճ իրազեկում չի իրականացվել: Միաժամանակ հարկ է նշել, որ տեղամասի փոփոխության հնարավորությունը չի կարող համարվել մատչելիության պատշաճ ապահովում: Հաշմանդամություն ունեցող ընտրողները պետք է կարողանան մյուսների հետ հավասար պայմաններում իրացնել իրենց ընտրական իրավունքը՝ ունենալով ամբողջական հասանելիություն թե՛ ընտրական նյութերին, թե՛ տեղամասերին և քվեարկության պարագաներին:

Դիտարկված տեղամասային կենտրոններից 14-ում չի եղել սանհանգույց, իսկ 35-ում առկա սանհանգույցի պայմանները բավարար չեն եղել: Դիտորդների գնահատմամբ հանձնաժողովի նիստի ընթացքում քվեարկության սենյակում լուսավորությունը բավարար չի եղել տեղամասային կենտրոնների 25%-ում, օրվա ընթացքում ցուցանիշը բարելավվել է և լուսավորությունը բավարար չի եղել տեղամասային կենտրոնների 9%-ում: Քվեախցիկների լուսավորությունը բավարար չի եղել դիտարկված տեղամասերի 7%-ում:

Քվեարկության սենյակի տարածքը և ընդհանուր կահավորումը/հարմարությունը բավարար է գնահատվել տեղամասերի 90%-ում: Կահավորումը քվեարկության գաղտնիության տեսանկյունից խնդրահարույց է համարվել տեղամասերի 6%-ում:

Ընտրական ցուցակներ

Տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրելու իրավունք ունեն տվյալ համայնքում 6 ամսից ավել հաշվառված 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները և մեկ տարուց ավել հաշվառված ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինքն: 2018թ. Երևանի ավագանու ընտրություններին մասնակցության իրավունք ուներ 848 346 անձ, քվեարկությանը մասնակցել է 370 368-ը (43.66%): 2023թ. Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու իրավունք ուներ 824 317 անձ, որոնցից քվեարկությանը մասնակցել է 234 442-ը (28.44%): Անկախ դիտորդ դաշինքի անդամ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության տրամադրած տվյալներից պարզ է դառնում, որ 2018թ. ընտրություններից հետո Երևան քաղաքում հաշվառումից դուրս եկած ՀՀ քաղաքացիների թիվը շուրջ 117000 է, իսկ հաշվառված քաղաքացիների թիվը 167 000 է, նրանցից 10 000-ը հաշվառվել են ընտրություններին նախորդող 6 ամիսների ընթացքում և համապատասխանաբար չեն հայտնվել ընտրական ցուցակներում: Երևան քաղաքում հաշվառումից դուրս եկած ոչ ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց թիվը 15 000-ն է, իսկ հաշվառվածների թիվը՝ 52 000, նրանցից շուրջ 22 000-ը հաշվառվել են ընտրություններից ոչ ավել, քան մեկ տարվա ընթացքում և չեն հայտնվել ընտրական ցուցակներում: Այսինքն հաշվառման հասցեի փոփոխության միջոցով Երևան քաղաքի ընտրական ցուցակներում վերջին 5 տարում ավելացել է շուրջ 40 000 ՀՀ քաղաքացի և շուրջ 16 000 ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձ: Զուգահեռաբար

ՀՀ ընտրական օրենսգրքի Հոդված 10-ի հիման վրա ընտրական ցուցակներում չեն ներառվել այն մարդիկ, ովքեր վերջին 6 ամիսների ընթացքում չեն ունեցել անձը հաստատող վավեր փաստաթուղթ: Այս թիվը եղել է շուրջ 92 428: Այս և բնական փոփոխությունների (18 տարի լրանալու արդյունքում ցուցակում հայտնվելը կամ մահանալու արդյունքում հեռացվելը) արդյունքում ի վերջո *2023 թ. ընտրողների թիվը 2018թ. համեմատ պակաս է 24 000-ով*: Հետաքրքրական է, որ եթե անվավեր փաստաթղթերի հիմքով ընտրողները չհեռացվեին ընտրական ցուցակից, ապա ընտրողների թիվը կլիներ 916 745 և համապատասխանաբար քվեարկության մասնակցությունը կլիներ 25.57%:

Ընտրություններին նախորդող և նախընտրական քարոզչության փուլում դիտորդական առաքելությունների և քաղաքական ուժերի կողմից եղել են հրապարակումներ միևնույն հասցեում բազմաթիվ քաղաքացիների հաշվառման փաստի վերաբերյալ: Այդ հրապարակումների հետքերով իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք խնամքի կամ այլ նմանատիպ հաստատություններ են կամ հաշվառումն իրականացվել է անձանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորության համար: «Ականատես» դիտորդական առաքելության զեկույցի համաձայն դեռևս կան հասցեներ, որոնցում գրանցված ընտրողների թիվը խնդրահարույց է[16]: Միաժամանակ նշված հասցեներում ընտրողների ընդհանուր թիվը շուրջ 340 է, ինչն էական ազդեցություն չէր կարող ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

Դիտորդական առաքելություններ

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն է իրականացրել երեք տեղական դիտորդական դաշինք:

- «Ականատես դիտորդական առաքելություն»
- «ՀայաՔվե» դիտորդական առաքելություն
- Անկախ դիտորդ հասարակական դաշինք (սույն զեկույցի հեղինակ)

ՀՀ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների արդյունքում ամրագրվել է դիտորդական դաշինքների ձևավորման իրավունքը, որի շնորհիվ տեղական առաքելությունները կարող են տեղամասում ունենալ մինչև 2 ներկայացուցիչ:

Միջազգային դիտորդական առաքելությամբ հանդես են եկել.

- Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը
- Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական հարթակը
- Օտարերկրյա ընտրական մարմիններ
- ՀՀ հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ

Դիտորդական առաքելությունների գրանցման հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել:

ՀՀ օրենսդրությունը չի կարգավորում նախընտրական փուլում երկարաժամկետ դիտորդությունը և չի նախատեսում որևէ սահմանափակում կամ առավելություններ հավատարմագրված կազմակերպությունների համար: Կազմակերպությունները գործում են ընդհանուր քաղաքացիական վերահսկողության տրամաբանությամբ,

[16] https://transparency.am/hy/publication/pdf/354/10888, էջ 27

այսինքն իրականացնում են հարցումներ պետական մարմիններին, հարցազրույցներ թեկնածուների և ընտրական հանձնաժողովների հետ և հավաքների մշտադիտարկումներ:

Երկարաժամկետ դիտարկման ընթացքում Անկախ դիտորդը հետաքննել և հրապարակել է տեղեկություն իշխող ՔՊ կուսակցության կողմից Սպիտակ համայնքում վարչական ռեսուրսի օգտագործման միջոցով ընտրողների ցուցակագրման մասին: Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը զրպարտություն է որակել հրապարակված տեղեկատվությունը և հերքման պահանջով դատական հայց ներկայացրել Անկախ դիտորդ հասարակական դաշինքի անդամ Իրազեկ քաղաքացիների միավորման դեմ: Կուսակցությունը դատարանից նաև պահանջել էր 1 մլն դրամի չափով արգելանք կիրառել կազմակերպության հաշիվների նկատմամբ՝ որպես հայցի ապահովման միջոց:[17]

Այս արգելանքը վերացվեց դատարանի նոյեմբերի 27-ի որոշմամբ: Զրպարտության հայցով առաջին դատական նիստը նշանակվել էր 2024թ. փետրվարի 6-ին:

Նախընտրական փուլում Անկախ դիտորդը մի շարք հարցումներ է իրականացրել, այդ թվում Երևանի քաղաքապետարանի և թաղապետարանների աշխատակազմերի արձակուրդների վերաբերյալ տեղեկատվության հարցումն էր: Հարցման նպատակն էր իմանալ, թե որ աշխատակիցներն են նախընտրական քարոզչության փուլում գտնվում արձակուրդում և համապատասխանաբար որոնք են քարոզչական միոցառումներին մասնակցում իրենց աշխատանքային ժամին: Այս հարցման պատասխանները ստացվեցին 2023թ. սեպտեմբերի վերջին՝ փաստացի անհնարին դարձնելով վարչական ռեսուրսի օգտագործման նկատմամբ պատշաճ վերահսկողության հնարավորությունը: Անկախ դիտորդը հայտարարություն է տարածել պատշաճ ժամկետներում տեղեկություն չտրամադրելու վերաբերյալ[18] և դատական հայց ներկայացրել: Հայցը մերժվել է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից և ներկայացվել է վճռաբեկ դատարան:[19]

[17] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=49258120924393203
[18] https://hcav.am/ind-obs-09-09-2023/
[19] http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809986900

Քվեարկության օրվա դիտարկման արդյունքները

Քվեարկության օրը «Անկախ դիտորդի» ներկայացուցիչներն այցելել են Երևան քաղաքի 475 տեղամասերից 468-ը՝ առնվազն 1 անգամ: Քվեարկության օրը հիմնականում արձանագրվել է ցածր մասնակցություն և հանգիստ մթնոլորտ, սակայն առանձին տեղամասերում նկատվել են ուղղորդման և միջամտության դեպքեր:

Քվեարկության նախապատրաստում

Տեղամասային ընտրական հանձնաժողովների առավոտյան նիստը դիտարկվել է 105 տեղամասում: Նիստի ընթացքում արձանագրվել են միայն ընթացակարգային խախտումներ: Արձանագրված միջադեպերը ևս վերաբերում են ընթացակարգային խախտումների շուրջ տարաձայնություններին:



Քվեարկության ընթացքը

Քվեարկության ընթացքը դիտարկվել է շրջիկ դիտորդների կողմից, որոնք օրվա ընթացքում մի քանի անգամ այցելել են Երևան քաղաքի գրեթե բոլոր տեղամասերը: Դիտորդների կողմից գնահատվել է տեղամասերում առկա ընդհանուր իրավիճակը և արձանագրվել են առանձին խախտումներ:



Դիտորդները 145 տեղամասում կամ դրանց շուրջ 297 խախտում են արձանագրել: Խախտումների գերակշիռ մասն ընթացակարգային են, սակայն արձանագրվել են նաև քվեարկության սենյակում գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայության, կուտակումների, քվեարկության գաղտնիության խախտման, ընտրողների ուղղորդման, կազմակերպված տեղափոխության, դիտորդների կամ ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտման, սպառնալիքների և վեճերի դեպքեր:

Խախտման բնույթը	**Դեպքերի քանակը**	**ՏԿ-ների քանակը**
ընթացակարգի խախտում	86	72
գտնվելու իրավունք չունեցող անձի տևական ներկայություն	36	32
բաց քվեարկություն/գաղտնիության բացահայտում	35	33
ընտրողների ուղղորդում	33	23
կուտակում	33	22
վիճաբանություն և/կամ ծեծկռտուք	15	12
դիտորդի/ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտում	13	12
ընտրողների կազմակերպված տեղափոխություն	10	8
քարոզչություն	9	8
իրավասու մարմինների անգործություն	8	6
սնունդ կուսակցության կողմից	6	6
ճնշումներ/սպառնալիքներ կամ հարկադրանք	3	3
այլ անձի փոխարեն քվեարկության փորձ	2	2
3-րդ անձանց տեղեկատվության տրամադրում	2	2
ընտրողների շարժ կուսակցության շտաբի և ՏԿ-ի միջև	2	2
քվեաթերթիկների բազմակի խոտան կամ քվեարկության նյութերի բացակայություն/ վնասում կամ հափշտակում	2	2
քվեաթերթիկների դուրս բերում	1	1

Գտնվելու իրավունք չունեցող անձանց տևական ներկայության 36 դեպքերն արձանագրվել են 32 տեղամասերում և հիմնականում տեղի են ունեցել վստահված

անձանց և թեկնածուների մասնակցությամբ: Վստահված անձանց դեպքում սա արտահայտվում է նրանով, որ նույն ուժից մեկից ավելի վստահված անձինք կա՛մ ներկա են գտնվել քվեարկության սենյակում, կա՛մ գտնվել են տեղամասի տարածքում, սակայն շարունակել են գրանցված լինել գրանցամատյանում՝ որպես քվեարկության սենյակում գտնվող: Միևնույն ուժը ներկայացնող 2-րդ, 3-րդ վստահված անձանց միաժամանակյա ներկայությունը կրկնվող խախտում է բոլոր ընտրությունների ժամանակ և պատճառաբանվում է երկու կերպ. չիմացություն, որ ի տարբերություն Ազգային Ժողովի ընտրությունների, ՏԻՄ ընտրությունների դեպքում Ընտրական Օրենսգիրքը թույլատրում է յուրաքանչյուր ուժից միայն մեկ վստահված անձի ներկայություն, կամ վստահություն, որ եթե վստահված անձանցից միայն մեկն է քվեարկության սենյակում, դա նշանակում է, որ Օրենսգրքի պահանջը կատարված է: Արձանագրվել է նաև 6 քաղաքական ուժերի 10 թեկնածուների ներկայությունը տեղամասերում: Ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ թեկնածուները կարող են քվեարկության սենյակում գտնվել միայն ձայների հաշվարկի ընթացքում (և իհարկե սեփական քվեարկության ժամանակ): Ուշագրավ է, որ արձանագրված բոլոր դեպքերում թեկնածուները համոզված էին, որ տեղամասում քվեարկության ընթացքում գտնվելու իրավունք ունեն, և հայտնում էին, որ արդեն բազմաթիվ տեղամասեր են այցելել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համաձայն անգամ մեկ անձի տևական անհարկի ներկայությունը տեղամասային կենտրոնից 50 մետր շառավղով արգելված է և հավասարեցված է կուտակումներին: Այդուհանդերձ, արձանագրված 33 կուտակումների գերակշռող մասը վերաբերել է մի քանի անձանց ներկայությանը, վստահված անձանց և իրենց շուրջ հավաքվող ընտրողների կամ անհայտ անձանց ներկայությանը: Վստահված անձանց և այլ աջակիցների ներկայության հիման վրա կուտակումները հիմնականում ասոցացվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ: Նկատվել են նաև «Հանրապետության» և «Ապրելու երկրի» հետ ասոցացվող անձանց կուտակումների դեպքեր:

Ընտրողների ուղղորդման, քվեարկության վերահսկողության 33 դեպքեր են արձանագրվել 23 տեղամասերում: Բացառությամբ 9 դեպքերի, մյուս իրավիճակներում ուղղորդումներում ներգրավված էին վստահված անձինք և հանձնաժողովի անդամները (հիմնականում նախագահները): 14 դեպքում ուղղորդումներն իրականացվում էին ի օգուտ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, 2 դեպքում՝ Ապրելու Երկրի, մեկական դեպքերում՝ Ուժը Հայրենյաց, Հանրապետություն, Լուսավոր Հայաստան կուսակցությունների և «Մայր Հայաստան» դաշինքի: Դիտորդների համար տեսանելի է եղել օրինաչափությունը, թե ինչպես են տարբեր անձինք ուղեկցում ընտրողներին դեպի տեղամաս, կազմակերպում տեղափոխությունը կամ դիմավորում տեղամասի մոտ և արդեն քվեարկության սենյակում հաղորդակցվում ընտրողների հետ, ցուցումներ տալիս ընտրողների գրանցման կամ քվեարկության վերաբերյալ, կանգնում քվեախցիկի մոտ՝ ստեղծելով քվեարկության գաղտնիության բացահայտման վտանգ: Ուշագրավ է, որ 9/6 տեղամասի տարածքում արձանագրված ուղղորդման դեպքում դիտորդները լսել են, թե ինչպես է Քաղաքացիական Պայմանագրի վստահված անձը համագործակցում անհայտ անձանց հետ, որոնք ցուցում էին տալիս երկու ընտրողների քվեարկել «Հանրապետություն» կուսակցության օգտին:

Բաց քվեարկության կամ քվեարկության գաղտնիությանն այլ կերպ միջամտելու կամ դրա վտանգ արձանագրվել է 33 տեղամասում: Խնդիրը պայմանավորված էր ոչ պատշաճ կահավորմամբ կամ լուսավորությամբ, որոնց պատճառով ընտրողները ստիպված էին քվեարկել քվեախցիկից դուրս և նրանց գաղտնիությունը լիարժեք ապահովված չէր: Արձանագրված դեպքերում դիտարկումներից հետո խախտումը կամ դրա վտանգը հիմնականում վերացվել է հանձնաժողովի կողմից:

Ընտրողների տեղափոխության առնչությամբ նկատվել է տարեց մարդկանց որոշակի կազմակերպված տեղափոխություն: Տեղափոխման նույնականացված դեպքերն առնչվում են Քաղաքացիական պայմանագիր կուսակցության հետ:

Այլ անձի փոխարեն քվեարկությանն առնչվող խախտումներից մեկի դեպքում ընտրողը փորձել է իր քվեարկության ընթացքում միջամտել ընտանիքի անդամի քվեարկությանը: Մյուս դեպքում ընտրողը հայտնաբերել է, որ իր անվան դիմաց կա ստորագրություն: Հանձնաժողովի անդամը պնդել է, որ ստորագրությունը սխալմամբ է դրվել այդ տողում և կազմվել է արձանագրություն:

Արձանագրված խախտումների և ընդհանուր դիտարկումների հիման վրա դիտորդները գնահատել են քվեարկության օրվա ընթացքում իրավիճակի ռիսկայնությունը և ստացել հետևյալ պատկերը:

Ընտրությունների արդյունքների վրա խախտումների ազդեցությունը գնահատելու համար Անկախ դիտորդի գործընկեր անկախ փորձագետ Ռոման Ուդոտը համադրել է ընտրողների մասնակցության տվյալները տեղամասերում արձանագրված խախտումների տվյալների հետ: Այս համադրությունից պարզ է դառնում, որ մի քանի տեղամասերում խախտումների ծավալին զուգահեռ հարաբերականորեն բարձր է եղել և՛ մասնակցությունը, և՛ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ստացած քվեները: Այս առումով ամենատեսանելի օրինակը Աջափնյակ վարչական շրջանի 6/13 տեղամասն է, որտեղ դիտորդների կողմից արձանագրվել է 8 խախտում: Այս տեղամասում արձանագրված մասնակցությունն ամենաբարձրն է՝ 39.16%, իսկ Քաղաքացիական պայմանագիրն արձանագրել է իր ամենաբարձր արդյունքներից մեկը՝ 60.11%: Միաժամանակ մյուս տեղամասերի արդյունքներից պարզ է դառնում, որ այս տվյալները համադրելի և համեմատելի չեն ու արձանագրված բնույթի խախտումներն ուղիղ ազդեցություն չունեն մասնակցության ու արդյունքների վրա:



Արձանագրված խախտումները և միտումները հաշվի առնելով՝ Երևանի տարբեր վարչական շրջաններում օրվա ընթացքում գնահատվել է ընդհանուր առմամբ էական խախտումների հավանականությունը և ընտրությունների ռիսկայնությունը: Հարկ է նշել, որ էական խախտումների վտանգը խիստ ցածր է գնահատվել և քվեարկության օրը հիմնականում բնութագրվել է որպես հանգիստ և պասիվ: Միաժամանակ դիտորդական առաքելությունն ուշադրություն է դարձրել այն խնդիրներին ու վայրերին, որտեղ խախտումների որևէ հավանականություն նշվել է անգամ մեկ դիտորդական զույգի կողմից:

- **Ընտրողների տեղափոխության** որոշակի հավանականություն արձանագրվել է բոլոր վարչական շրջաններում, բացառությամբ Էրեբունի, Նուբարաշեն, և Դավթաշեն վարչական շրջանների
- Բավականին շատ հիշատակված վտանգ են հանդիսացել **կուտակումները**: Կուտակումների վտանգ կամ դրանց հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել Դավթաշենում և ցածր են գնահատվել Քանաքեռ-Զեյթունում: Վտանգը առավել բարձր է համարվել Աջափնյակ, Կենտրոն, Նորք-Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն և Շենգավիթ վարչական շրջաններում: Հարկ է նշել, որ այս դեպքերում կուտակումը ոչ թե բարձր մասնակցությամբ էր պայմանավորված, այլ տեղամասի շրջակայքում երրորդ անձանց տևական կամ պարբերական անհարկի ներկայությամբ
- **Կողմնակի անձանց ներկայություն** քվեարկության սենյակում արձանագրվել է բոլոր վարչական շրջաններում բացի Արաբկիր, Դավթաշեն, Քանաքեռ Զեյթուն վարչական շրջաններից: Դրա հետ կապված ռիսկերն առավել բարձր են գնահատվել Աջափնյակ, Էրեբունի, Նուբարաշեն, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում
- **Ընտրողների ուղղորդման կամ քվեարկության վերահսկողության վտանգ** չի նկատվել Դավթաշեն վարչական շրջանում: Այն խնդրահարույց է համարվել Արաբկիր, Նոր Նորք, Աջափնյակ, Էրեբունի, Կենտրոն, Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններում: Աջափնյակ և Կենտրոն համայնքներում ուղղորդումները նաև վիճաբանությունների տեղիք են տվել:
- **Քվեարկության գաղտնիության խախտման վտանգ** չի արձանագրվել Դավթաշեն վարչական շրջանում, իսկ առավել խնդրահարույց են համարվել Արաբկիր, Աջափնյակ, Կենտրոն, Նորք-Մարաշ և Շենգավիթ վարչական շրջաններում
- Չնայած ընտրողների ցածր մասնակցությանը, որոշակի **լարվածություն** է նկատվել բոլոր վարչական շրջանների տեղամասերում: Վտանգն առավել բարձր է գնահատվել Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Նուբարաշեն և Ավան վարչական շրջանները
- **Հանձնաժողովների աշխատանքի խաթարման** որոշակի վտանգ է արձանագրվել Արաբկիր, Աջափնյակ, Ավան, Կենտրոն, Նորք Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում:
- **Տեղամասային ընտրական հանձնաժողովների ոչ կոմպետենտությունն** ամենից խնդրահարույց հարցն է համարվել բոլոր վարչական շրջաններում բացառությամբ Դավթաշենի: Վտանգը

հատկապես բարձր է գնահատվել Աջափնյակ, Արաբկիր, Ավան, Էրեբունի և Նուբարաշեն, Կենտրոն, Նորք Մարաշ, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն և Շենգավիթ վարչական շրջաններում

- **Դիտորդների, ՀԼՄ-ների, վստահված անձանց իրավունքների խախտման** որոշակի վտանգ արձանագրվել է բոլոր վարչական շրջաններում բացառությամբ Դավթաշենի: Առավել խնդրահարույց են գնահատվել Ավան, Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Նուբարաշեն, կենտոն և Նորք-Մարաշ վարչական շրջանները: Հատապես Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների տեղամասերում մի քանի անգամ փորձ է արվել խոչընդոտել դիտորդների մուտքը կամ փաստաթղթերի հետ ծանոթանալը:
- Ընտրակաշառքի բաժանման կամ ընտրությունների արդյունքների կեղծման հավանականությունը ցածր է գնահատվել բոլոր վարչական շրջաններում բացառությամբ Ավանի, որտեղ դիտորդները հատկապես խնդրահարույց են համարել հանձնաժողովի ոչ կոմպետենտությունը և տեղամասում լարվածության վտանգը:

Ռիսկայնության գնահատումն ամբողջությամբ ունի հետևյալ տեսքը.

	ռիսկայնություն	Ավան	Ն. Նորք	Ք. Զեյթուն	Արաբկիր	Դավթաշեն	Աջափնյակ	Մալաթիա-Սեբաստիա	Շենգավիթ	Կենտրոն և Նորք-Մարաշ	Էրեբունի և Նուբարաշեն
Ընտրողների տեղափոխություն	Չկա	90%	77%	92%	76%	100%	81%	83%	81%	73%	100%
	Ցածր	10%	14%	0%	10%	0%	10%	17%	10%	23%	0%
	Միջին	0%	9%	8%	10%	0%	5%	0%	0%	0%	0%
	Էական	0%	0%	0%	5%	0%	5%	0%	10%	4%	0%
	Բարձր	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
Կուտակումներ	Չկա	40%	68%	83%	81%	100%	52%	67%	57%	38%	62%
	Ցածր	50%	18%	17%	5%	0%	14%	17%	33%	35%	19%
	Միջին	10%	14%	0%	14%	0%	19%	17%	5%	19%	14%
	Էական	0%	0%	0%	0%	0%	5%	0%	5%	4%	5%
	Բարձր	0%	0%	0%	0%	0%	10%	0%	0%	4%	0%
Կողմնակի անձանց ներկայություն	Չկա	50%	59%	92%	71%	100%	62%	71%	71%	58%	52%
	Ցածր	50%	36%	0%	14%	0%	24%	17%	24%	27%	19%
	Միջին	0%	5%	8%	10%	0%	5%	13%	0%	0%	14%
	Էական	0%	0%	0%	5%	0%	5%	0%	5%	12%	10%

	Բարձր	0%	0%	0%	0%	0%	5%	0%	0%	4%	5%
Ընտրողների ուղղորդում / քվեարկության վերահսկողություն	Չկա	50%	73%	83%	62%	100%	71%	83%	76%	54%	81%
	Ցածր	50%	14%	8%	10%	0%	5%	17%	14%	23%	10%
	Միջին	0%	9%	0%	10%	0%	0%	0%	0%	8%	0%
	Էական	0%	5%	8%	10%	0%	5%	0%	5%	8%	5%
	Բարձր	0%	0%	0%	10%	0%	19%	0%	5%	8%	5%
Քվեարկության գաղտնիության խախտում	Չկա	40%	73%	83%	67%	100%	71%	75%	62%	65%	52%
	Ցածր	60%	23%	17%	24%	0%	19%	25%	33%	27%	43%
	Միջին	0%	5%	0%	10%	0%	10%	0%	0%	8%	5%
	Էական	0%	0%	0%	0%	0%	0%	0%	5%	0%	0%
	Բարձր	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
Լարվածություն, բախման վտանգ	Չկա	60%	82%	83%	48%	67%	62%	54%	76%	54%	62%
	Ցածր	20%	14%	17%	38%	33%	19%	33%	19%	31%	19%
	Միջին	10%	5%	0%	5%	0%	5%	13%	0%	8%	10%
	Էական	10%	0%	0%	10%	0%	10%	0%	5%	8%	5%
	Բարձր	0%	0%	0%	0%	0%	5%	0%	0%	0%	5%
Հանձնաժողովների աշխատանքի խաթարում	Չկա	50%	77%	75%	81%	100%	76%	83%	95%	73%	86%
	Ցածր	40%	23%	17%	5%	0%	0%	17%	0%	19%	14%
	Միջին	10%	0%	8%	10%	0%	19%	0%	5%	8%	0%
	Էական	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
	Բարձր	0%	0%	0%	5%	0%	5%	0%	0%	0%	0%
Հանձնաժողովների ոչ կոմպետենտությունը	Չկա	50%	73%	58%	67%	100%	52%	63%	62%	62%	33%
	Ցածր	10%	14%	17%	14%	0%	24%	33%	29%	27%	38%
	Միջին	20%	5%	8%	5%	0%	5%	4%	0%	4%	14%
	Էական	10%	9%	8%	10%	0%	10%	0%	10%	8%	10%
	Բարձր	10%	0%	8%	5%	0%	10%	0%	0%	0%	5%
Դիտորդների, ՀԼՄ-ների, վստ. անձանց իրավունքների խախտում	Չկա	70%	77%	92%	71%	100%	67%	92%	95%	81%	62%
	Ցածր	0%	18%	8%	14%	0%	19%	8%	0%	8%	14%
	Միջին	10%	0%	0%	10%	0%	5%	0%	0%	0%	5%
	Էական	20%	5%	0%	5%	0%	5%	0%	5%	8%	10%
	Բարձր	0%	0%	0%	0%	0%	5%	0%	0%	4%	10%

Ընտրակաշառքի բաժնում	Չկա	80%	82%	92%	86%	100%	86%	92%	95%	88%	95%
	Ցածր	10%	18%	8%	14%	0%	14%	8%	5%	12%	5%
	Միջին	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
	Էական	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
	Բարձր	10%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
Ընտրությունների արդյունքների կեղծում	Չկա	70%	82%	92%	86%	100%	86%	92%	95%	85%	95%
	Ցածր	20%	18%	8%	14%	0%	14%	8%	5%	15%	5%
	Միջին	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
	Էական	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
	Բարձր	10%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%

Ձայների հաշվարկի ամփոփում

Ձայների հաշվարկի նիստը դիտարկվել է առաքելության դիտորդների կողմից 94 տեղամասային ընտրական հանձնաժողովներում: Տեղամասային կենտրոններում ձայների հաշվարկն ընթացել է առանց էական խախտումների: Դիտարկված բոլոր տեղամասերում ներկա են եղել մասնակցող ուժերի վստահված անձինք: Սակայն հարկ է նշել, որ եթե Քաղաքացիական պայմանագիր և Ապրելու երկիր կուսակցությունների վստահված անձինք ներկա էին եղել դիտարկված տեղամասերից համապատասխանաբար 95% և 78%-ում, իշխող ուժի հիմնական մրցակից Ազգային առաջընթաց կուսակցության և «Մայր Հայաստան» դաշինքի վստահված անձինք եղել էին դիտարկված տեղամասերի 56% և 40%-ում:



Մյուս կուսակցությունները վստահված անձանց սահմանափակ ռեսուրսով կարողացել են հետևել ձայների հաշվարկի ընթացքին ավելի քիչ տեղամասերում: Տեղամասերի 14% ձայների հաշվարկին ներկա էին եղել մեկ կամ երկու

կուսակցությունների վստահված անձինք, հիմնականում Քաղաքացիական պայմանագրից և Ապրելու երկրից:

Այլ դիտորդական կազմակերպություններից դիտորդներ չեն եղել դիտարկված տեղամասերի 72%-ում, իսկ ԶԼՄ ներկայացուցիչներ՝ 88%-ում: Մի քանի տեղամասում արձանագրվել է տարիներ շարունակ կրկնվող խնդիրը, երբ հանձնաժողովի նախագահը վստահ է, որ ձայների հաշվարկին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք չեն կարող տեղամաս մուտք գործել ժամը 20:00-ից հետո: Արձանագրված բոլոր դեպքերում վստահված անձանց և դիտորդների մուտքը թույլատրվել է պարզաբանումներից հետո: Այս խնդրահարույց պրակտիկայի վերացումը կարող է նպաստել պակաս մարդկային ռեսուրսներ ունեցող կուսակցությունների կողմից ավելի շատ տեղամասերում ձայների հաշվարկի վերահսկման հնարավորությանը: Հաշվարկի ընթացքում արձանագրվել է 3 դեպք, երբ տեխնիկական սարքավորման տպված կտրոնների թիվը և ընտրողների ստորագրությունների թիվը տարբերվել է 1-ով: Այս դեպքերը հանձնաժողովի կողմից արձանագրվել են գրանցամատյաններում:

Բոլոր 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացված դիտարկման ժամանակ արձանագրվել է, որ տեղամասային կենտրոններից բերված մեծ և փոքր պարկերի 4%-ը խախտումներով է ներկայացվել՝ մասնավորապես փոքր պարկը կամ այլ պարագաներ սխալմամբ տեղադրված են եղել մեծ պարկում, ինչի հետևանքով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով կազմել է արձանագրություն և վերացրել խախտումը: Հարկ է արձանագրել, որ այս խախտումը այլ համայնքների ՏԻՄ ընտրությունների համեմատ բավական ցածր տոկոս է կազմել:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակ և արձանագրության մեկ քաղվածք ներկայացվում է առձեռն: Արձանագրությունները պետք է պատշաճ կերպով լրացված լինեն և ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Տեղամասային ընտրական հանձնաժողովների 5%-ը պատշաճ չի ներկայացրել արձանագրությունները: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին ներկայացված արձանագրություններից 3-ը ստորագրված չեն եղել տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: 5 դեպքում արձանագրությունները դրված են եղել պարկի մեջ և չեն ներկայացվել առձեռն: Մյուս դեպքերում առկա են եղել անփութության հետևանքով թվական սխալներ կամ ջնջումներ:

Հետագա օրերին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն իրականացրել են 78 տեղամասի վերահաշվարկ, որոնց արդյունքում տվյալների էական փոփոխություն չի արձանագրվել:

Հանրային տրամադրությունների և ընտրական վարքի ուսումնասիրության արդյունքներ

Քվեարկության օրը տեղամասերի շրջակայքում դիտորդները հարցումներ են իրականացրել քվեարկությանը մասնակցած անձանց շրջանում: Հարցումների որոշ արդյունքներ ներկայացվել է այլ բաժիններում, իսկ հիմնական մասն ամփոփված է ստորև:

Հասկանալու համար, թե որքանով է քաղաքական դաշտի բեռևացվածությունն արտացոլում հանրության շրջանում բևեռացվածությունը՝ քվեարկությանը մասնակցած անձանց տրվել են հարցեր առաջնահերթ խնդիրների, քաղաքական նախապատվությունների և քաղաքացիների մասնակցության հնարավորությունների մասին: Քաղաքացիների քվեարկության գաղտնիությունը չբացահայտելու համար՝ տրվող հարցերը ձևակերպվել են հնարավորինս ընդհանրական՝ զերծ մնալով կուսակցական նախապատվությունը բացահայտելուց:

Հարցին, թե իրենց նախընտրած քաղաքական ուժի կողմից արձանագրած ցանկալի արդյունքի պարագայում, որ առաջնահերթ խնդրի լուծումն են հնարավոր համարում, ընտրողները տվել են բազմազան պատասխաններ: Այս պատասխաններն ըստ էության առավել համակարգված արտացոլում են միևնույն տրամաբանությունը, որ ստացվել էր հավաքների մասնակիցների շրջանում իրականացված հարցումներից:

Հարցի ձևակերպումը եղել է բաց՝ նպատակ ունենալով չկաշկանդել ընտրողին առանձին կատեգորիաներով կամ թեմատիկ ուղղություններով: Հարցվածների 10%-ը դժվարացել է պատասխանել, իսկ 5%-ը նշել է, որ ոչ մի խնդիր չի կարող լուծվել: Ստացված պատասխանները կարող ենք պայմանականորեն բաժանել երկու մասի՝ համայնքային (71%) և պետական (29%) նշանակության: Այս բաժանումը խիստ պայմանական է և արտացոլում է պատասխանի ձևակերպումը այն իմաստով, թե արդյոք խնդիրը դիտարկվում է միայն Երևան քաղաքի համատեքստում, թե ողջ պետության և կենտրոնական իշխանության:





Հարցին, թե ինչպես կարող են սովորական քաղաքացիներն ազդել քաղաքական գործընթացների վրա, պատասխանել է 282 տղամարդ և 316 կին, հարցին պատասխանելիս հարցվողները կարող էին նշել մինչև 3 տարբերակ՝ ըստ առաջնահերթության: Կանայք, որպես առաջին պատասխան, առավել հաճախ նշել են ընտրություններին մասնակցելով, իսկ տղամարդիկ՝ սեփական աշխատանքը բարեխիղճ կատարելով: Բոլոր հիշատակումների դեպքում ընտրություններին մասնակցելն ամենահաճախ տրված պատասխանն է երկու սեռերի մոտ, իսկ սեփական աշխատանքը բարեխիղճ կատարելը երկրորդ տեղում է: Հաշվի առնելով, որ հարցումն իրականացվել է տեղամասերից դուրս՝ քվեարկության մասնակցած անձանց շրջանում, հետաքրքրական է, որ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց 40%-ը չեն նշել ընտրություններին մասնակցելը՝ որպես քաղաքական գործընթացների վրա ազդեցության միջոց:

Վերոնշյալ երկու տարբերակներից հետո հիշատակված պատասխաններն էապես ավելի հազվադեպ են հնչել, ըստ այդմ երկու սեռերի պատասխանների տարբերությունը թեև ակնառու է, սակայն կարող է վիճակագրորեն նշանակալից չլինել: Ինչևէ, տղամարդկանց առաջին պատասխաններում երրորդ տեղում «ոչնչով» պատասխանն է, իսկ կանանց մոտ՝ ինքնակրթվելը և կրթելը: Այս պատասխանը բոլոր

հիշատակումներում երրորդ տեղում է թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում: Բոլոր հիշատակումների ուսումնասիրության մեջ ուշագրավ է, որ տղամարդիկ առավել հաճախ են ազդեցության միջոց համարել հասարակական գործունեությամբ և բիզնեսով/տնտեսական գործունեությամբ զբաղվելը, մինչդեռ կանայք ազդեցության միջոց են համարում ապօրինությունների մասին իրավապահներին հայտնելը, ապա նաև հասարակական գործունեությունը: Եթե քաղաքականությամբ զբաղվելը և բարձրաստիճան պաշտոն զբաղեցնելը, որպես առաջին հիշատակում, խիստ հազվադեպ է նշվել երկու սեռերի կողմից, ապա բոլոր հիշատակումներում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնելը առավել հաճախ է նշվել տղամարդկանց կողմից:

Ինչպես կարող է սովորական քաղաքացին ազդել քաղաքական գործընթացների վրա	**1-ին հիշատակում**		**բոլոր հիշատակումներ**	
	արական	**իգական**	**արական**	**իգական**
ընտրություններին մասնակցելով	32.3%	34.5%	23.9%	24.6%
իր սեփական աշխատանքը բարեխիղճ կատարելով	34.8%	33.9%	20.4%	21.4%
ինքնակրթվելով/կրթելով	5.3%	7.0%	10.7%	14.2%
հասարակական գործունեությամբ / կամավորությամբ	1.4%	2.8%	8.1%	6.3%
ապօրինությունների մասին իրավապահ մարմիններին հայտնելով	1.1%	2.8%	5.3%	7.5%
բիզնեսով/տնտեսական գործունեությամբ	6.4%	4.1%	7.7%	4.9%
խաղաղ ցույցերի միջոցով	0.7%	2.8%	3.4%	5.1%
քաղաքականությամբ զբաղվելով	2.1%	2.2%	5.3%	3.3%
ոչնչով	7.4%	4.7%	4.3%	3.7%
բարձրաստիճան պաշտոն զբաղեցնելով	2.1%	0.3%	3.7%	1.9%
ապօրինությունների մասին լրագրողներին, սոցցանցերում բարձրաձայնելով	0.4%	0.3%	2.1%	3.0%
ԴՊ	2.1%	1.6%	2.3%	1.5%
այլ	2.5%	2.8%	1.7%	1.8%
զինված պայքարի միջոցով	1.4%	0.0%	1.1%	0.8%

Ընտրական վարքի հարցման շրջանակներում ստացված տվյալների համաձայն հարցված տղամարդկանց 85%-ը և հարցված կանանց 90%-ը չեն մտածել առաջադրվելու մասին: Որպես չառաջադրվելու հիմնական պատճառ երկու սեռերն ամենից հաճախ նշել են հետաքրքրված չլինելը: Միաժամանակ կանանց կողմից այն ավելի հաճախ է նշվել: Հաջորդ առավել հաճախ տրվող պատասխաններն արդեն տարբեր են: Տղամարդկանց կողմից երկրորդ ամենահաճախ տրված պատասխանն էր առաջարկություն չստանալը, ինչը կանանց մոտ 4-րդ տեղում էր: Տղամարդկանց կողմից հաջորդ նշված պատճառը՝ ֆինանսական միջոցների սղությունը, կրկնակի պակաս է նշվել կանանց կողմից: Զուգահեռաբար կանանց կողմից երկրորդ ամենահաճախ նշված պատճառը գիտելիքների/կարողությունների պակասն է, որը տղամարդկանց կողմից նշված պատճառների շարքում յոթերորդ տեղում է:





Որպես կանանց քաղաքական մասնակցության ջատագով՝ Անկախ դիտորդը կարևոր է համարում այդ մասնակցության նկատմամբ հանրային տրամադրությունների գնահատումը: Այս առումով հետաքրքրական է, որ սեփական մասնակցության մասին խոսելիս թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ առավել հաճախ վկայակոչել են հետաքրքրված չլինելը, մինչդեռ ընդհանուր առմամբ կանանց մասին խոսելիս հիշատակում են ընտանիքի դեմ լինելը:





Թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց պատասխաններում արձանագրվել են և՛ խտրականության վկայակոչումներ և՛ պատասխանողների խիստ խտրական դիտարկումներ: Միաժամանակ հանրային ընկալումների տեսանկյունից դրական կարելի է համարել այն, որ երկրորդ առավել հաճախ նշված տարբերակն առաջարկություն չստանալն է: Այսինքն հանրային ընկալման տեսանկյունից առավել տեսանելի խնդիր է քաղաքական ուժերի կողմից կանանց ներառման ուղղությամբ քաղաքականության բացակայությունը:

Էական է նաև այն, որ կանանց բացարձակ մեծամասնությունը դրական վերաբերմունք ունի կանանց մասնակցությանը: Հարկ է արձանագրել սակայն, որ կա որոշակի բացասական միտում 2021թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ Երևան քաղաքում նույնանման հարցի պատասխանների համեմատ: 2021թ. կանանց պատգամավորության նկատմամբ վերաբերմունքը դրական էր տղամարդկանց 37.5%-ի մոտ և կանանց 63.2%-ի մոտ: Տղամարդկանց 24.9%-ն էր չեզոք վերաբերմունք արտահայտել ներկայիս 29.3 %-ի փոխարեն, իսկ կանանց 6.0%-ն էր բացասական վերաբերվում, ներկայիս 9.9%-ի փոխարեն:



Կանանց կողմից ընտրելու և ընտրվելու հնարավորության կարևորությունը հուշում է, որ կանանց քաղաքական մասնակցության բարձրացմանն ուղղված գործողություններն արդյունավետ են, բայց դեռևս ոչ բավարար: Ըստ այդմ սեռերի ներկայացման քվոտաները և ապահովման երաշխիքները կարևոր են քաղաքական հավասար մասնակցության մշակույթ ձևավորելու և ամրապնդելու համար:

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի հրաժարականը և նախորդած իրադարձությունները՝ հանրության շրջանում քննարկվում էր արտահերթ ընտրությունների նպատակահարմարությունը: Արտահերթ ընտրություններ տեղի չունեցան, հերթական ընտրություններն էլ նվազագույն մասնակցություն ապահովեցին:

Այնուամենայնիվ քվեարկությանը մասնակցած ընտրողներից Անկախ դիտորդը հետաքրքվել է արտահերթ ընտրությունների նկատմամբ իրենց վերաբերմունքով: Հարցին, թե արդյոք անհրաժեշտ էին Երևանի ավագանու արտահերթ ընտրություններ, հարցվողների 35.6%-ը պատասխանել է՝ այո, անհրաժեշտ էր արտահերթ ընտրություններ անցկացնել Հայկ Մարությանի հեռանալուց հետո, 10.4%-ը գտել է, որ արտահերթ ընտրություններ պիտի անցկացվեին Հրաչյա Սարգսյանի հեռանալուց հետո, 36.9%-ը գտել է, որ արտահերթ ընտրությունների անհրաժեշտություն չկար, իսկ 17.1%-ը դժվարացել է պատասխանել:

Թե՛ երկարաժամկետ դիտարկման ընթացքում, թե՛ քվեարկության օրն արձանագրվել է ընտրությունների նկատմամբ հետաքրքրության պակաս: Միևնույն ժամանակ հարցմանը մասնակցած անձանց մեծամասնությունը նշել է, որ իր կուսակցական նախապատվությունը որոշել է քարոզարշավի ընթացքում: Հետաքրքրական է քվեարկության օրը որոշում կայացրած անձանց բարձր թիվը:



Մեկնաբանելով թե ըստ իրենց ինչու են մարդիկ ընտրում այս կամ այն ուժին՝ հարցման մասնակիցներն ամենից հաճախ նշել են, որ քվեարկում են ելնելով քաղաքապետի թեկնածուից: Կուսակցության նախապատվության հիմքով ընտրությունը երկրորդ տարբերակն է:



Թեև երկու սեռերի պատասխանների միջև տարբերությունները չնչին են, սակայն կանայք առավել հաճախ են նշել կուսակցության նախապատվությամբ ընտրության մասին: Հետաքրքրական է, որ տղամարդիկ ավելի հաճախ են նշել, չարյաց փոքրագույնը ընտրելը կամ ընդդեմ որևէ ուժի քվեարկելը:



Արդյունքների վերլուծություն

Համամասնական ընտրությունների ընտրական շեմը սահմանված է 4% կուսակցությունների համար և 6% կուսակցությունների դաշինքների համար:

Երևանի ավագանու ընտրությունների քվեարկության արդյունքներով ընտրական շեմը հաղթահարել է 4 կուսակցություն և մեկ դաշինք:

Երևանում հաշվառված 824 317 ընտրողից քվեարկել է 234 442-ը (28.44%): ***Սա Երևան քաղաքի ավագանու ընտրությունների մասնակցության երբևէ գրանցված ամենացածր ցուցանիշն է այն դեպքում, երբ մասնակից ուժերի թիվն ամենաբարձրն է:*** Նախնական և վերջնական արդյունքներով ստացված պատկերը հետևյալն է:

Երևանի ավագանու ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի ստացած քվեները՝	**Նախնական**	**Փոփոխությունը վերահաշվարկի արդյունքում**	**Վերջնական**	**Տոկոս**	**Մանդատների թիվ**
Անվավեր քվեաթերթիկների թիվը	2,758	-266	2,492	1.06%	
1.«Հանրային ձայն» կուսակցություն	22431	+16	22447	9.68%	7
2.«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	75463	+31	75494	32.57%	24
3.«Արդար Հայաստան» կուսակցություն	2595	+5	2600	1.12%	0
4.«Հաղթանակ» կուսակցություն	3959	+1	3960	1.71%	0
5.«Ուժը հայրենյաց» կուսակցություն	1702	+6	1708	0.74%	0
6.«Հայաստանի եվրոպական կուսակցություն»	2571	-2	2569	1.11%	0
7.«Ազգային առաջընթաց» կուսակցություն	43765	+32	43797	18.89%	14
8.«Հանուն սոցիալական արդարության» կուսակցություն	780	+1	781	0.34%	0
9.«Հանրապետություն» կուսակցություն	26236	-3	26233	11.32%	8
10.«Միացյալ Հայաստան» կուսակցություն	1282	-5	1277	0.55%	0
11.«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	4174	+4	4178	1.80%	0
12.«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն	2348	-3	2345	1.01%	0
13.«Ապրելու երկիր» կուսակցություն	8425	+4	8429	3.64%	0
14.«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք	35740	+67	35807	15.45%	12

Մինչ հեղափոխությունը, դեռևս 2013թ. դիտորդական կազմակերպություններն արձանագրել են միտում, որ իշխող ուժի օգտին տրվող քվեների տոկոսը անհամաչափ աճում է տեղամասում ընտրողների մասնակցության աճին զուգահեռ: Նման անհամաչափությունը կարող է տեղի ունենալ քվեաթերթիկների լցոնման կամ այնպիսի միջամտության դեպքում, երբ քվեարկությանը մասնակցում են կոնկրետ մեկ ուժի օգտին քվեարկելու նպատակով բերված ընտրողները: Կուսակցությունների արձանագրած արդյունքների և մասնակցության տոկոսի միտումները աննշան շեղումներ է բացահայտում: Հեղափոխության նախորդող տարիների ընտրություններում ակնհայտ է դարձել, որ արձանագրված անհամաչափության ծավալը որոշիչ է եղել: Այսինքն ընտրությունների (ինչպես նաև 2015թ. սահմանադրական հանրաքվեի) արդյունքները ձևավորվել են արհեստական միջամտության արդյունքում:

2018թ. ի վեր կազմակերպված ընտրությունների ընթացքում կատարված համանման ուսումնասիրությունները նման միտում չեն բացահայտում: Թե՛ Ազգային Ժողովի, թե՛ Երևանի ավագանու ընտրություններում որոշակի աննշան շեղում է արձանագրվում ընդդիմության օգտին, իսկ իշխող Քաղաքացիական պայմանագիրն ավելի լավ արդյունքներ է ունենում ընտրողների ցածր մասնակցության դեպքում: Ստորև բերված գծապատկերից ակնհայտ է դառնում, որ Մայր Հայաստան դաշինքի օգտին քվեարկածների տոկոսը աճում է համեմատաբար բարձր մասնակցությամբ տեղամասերում: Պարզ է դառնում, թե որ տեղամասերն են կամ տեղամասերի մի մասն է պարզ են դառնում, երբ համեմատվում են առավելագույն մասնակցության տոկոսն ունեցող տեղամասերի և Մայր Հայաստան դաշինքի տոկոսային առումով առավելագույն արդյունքն ապահոված տեղամասերի ցուցակները: Մասնավորապես խոսքը Կենտրոն վարչական շրջանում 7, Ավան և Արաբկիր վարչական շրջաններում 2-ական տեղամասերի մասին է:



Կանանց ներկայացվածությունը

Գործող ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ ընտրական ցուցակներում մեկ սեռի ներկայացուցիչների թիվը չի կարող գերազանցել 70 տոկոսը: Իսկ խմբակցությունում մանդատը փոխանցվում է նույն սեռի ներկայացուցչին, եթե անձի մանդատից հրաժարվելու կամ ինքնաբացարկի արդյունքում խմբակցությունում տվյալ սեռի թեկնածուների թիվը 25 տոկոսից պակաս է:

Երևանի ավագանու մանդատների բաշխմանը մասնակցած ուժ	Մանդատների թիվ	Տղամարդ	Կին	Կանանց համամասնությունը
«Հանրային ձայն» խմբակցություն	7	4	3	42.86%
«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն	24	14	10	41.67%
«Ազգային առաջընթաց» խմբակցություն	14	9	5	35.71%
«Հանրապետություն» խմբակցություն	8	5	3	37.50%
«Մայր Հայաստան» խմբակցություն	12	9	3	25.00%
Ընդամենը	**65**	**41**	**24**	**36.92%**

Ընտրական շեմը չեն հաղթահարել 9 կուսակցություն, այդ թվում կին թեկնածուների կողմից գլխավորած երկու կուսակցությունները:

Հետընտրական զարգացումներ

Բացի ամենացածր մասնակցությունից, Երևանի ավագանու այս ընտրություններն առաջինն էին նաև նրանով, որ որևէ ուժ չստացավ մանդատների կեսից ավելին: Իշխող կոալիցիա ձևավորող Քաղաքացիական պայմանագիր և Հանրապետություն կուսակցությունները միասին նույնպես չունեին ավագանու մանդատների մեծամասնությունը: Մինչև ավագանու նիստը ընդդիմադիր Ազգային առաջընթաց և Հանրային ձայն կուսակցությունները և Մայր Հայաստան դաշինքը բանակցում էին Ազգային առաջընթացի ցուցակը գլխավորած Հայկ Մարությանին միասնական թեկնածու առաջադրելու շուրջ: Ազգային առաջընթաց կուսակցությունը և Մայր Հայաստանը եկան համաձայնության, իսկ Հանրային ձայն կուսակցությունը չհամաձայնեց քվեարկել Հայկ Մարությանին, քանի որ կուսակցության դե ֆակտո ղեկավար Վարդան Ղուկասյանի (Դոգ) առաջադրած պահանջը՝ համայնքապետարանի վերահսկողական պաշտոններն իրենց տալը, չընդունվեց:[20]

[20] Վարդան Ղուկասյանը պատասխանել է Հայկ Մարությանի առաջարկին https://iravaban.net/441820.html, https://armlur.am/1301648/, «Հանրային ձայն»-ի առաջ քաշած պայմանին դեմ չենք, բայց կա մտահոգություն. Հայկ Մարության (տեսանյութ) https://www.armtimes.com/hy/article/270214

Որպես երկրորդ տարբերակ՝ Հայկ Մարությանն ընդդիմադիր ուժերին առաջարկեց բոյկոտել համայնքի ղեկավարի ընտրության հարցով նիստը, ինչի արդյունքում նիստում քվորում չէր ապահովվի, համայնքի ղեկավար չէր ընտրվի և հնարավոր կլիներ գնալ նոր ընտրությունների:[21] Մայր Հայաստան դաշինքը համաձայնեց նաև բոյկոտի առաջարկին, իսկ Հանրային ձայնը ներկայացրեց պահանջ, որ նոր ընտրություններից հետո իրենց տրվի յուրաքանչյուր երրորդ թաղապետի պաշտոնը: Քաղաքական համաձայնություն տեղի չունեցավ և Հանրային ձայն կուսակցությունը հայտարարեց, որ ներկա կգտնվի ավագանու նիստին՝ արդյունքում ապահովելով դրա իրավազորությունը:

2023թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ Երևանի ավագանու առաջին նիստը, որին ներկա էին Հանրապետություն և Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունների 32 ավագանու անդամները, ինչպես նաև Հանրային ձայն կուսակցության 5 ավագանու անդամները: Նիստի ընթացքում Հանրապետություն և Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ավագանիների 32 ձայնով Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Տիգրան Ավինյանն ընտրվեց Երևանի քաղաքապետ:[22] Հանրային ձայն կուսակցության ավագանու 5 անդամները դեմ էին քվեարկել Տիգրան Ավինյանի թեկնածությանը, իրենցից երկուսը ավելի ուշ հայտարարեցին խմբակցությունից դուրս գալու մասին:

Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում: 2023թ. հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ նորընտիր քաղաքապետ Տիգրան Ավինյանի երդմնակալության արարողությունը: Տիգրան Ավինյանի երդման արարողությանը չմասնակցեցին ընդդիմադիր երեք խմբակցությունները: Օրենքի ձևակերպման համաձայն նիստն իրավազոր չէր, քանի որ ներկա չէր ավագանու անդամների պարզ մեծամասնությունը և համապատասխանաբար Տիգրան Ավինյանը չէր կարող ստանձնել իր լիազորությունները: Օրենքը սակայն չի նախատեսում նման հանգամանքներում իրադարձությունների զարգացման այլ սցենար:

Երդմնակալության արարողության առավել խնդրահարույց հանգամանք այն էր, որ լրատվամիջոցներին չէր թույլատրվել դահլիճից լուսաբանել արարողությունը: Փոխարենը նախատեսվում էր ուղիղ եթեր և Տիգրան Ավինյանի ճեպազրույցը դահլիճից դուրս՝ արարողությունից հետո: Լրագրողական կազմակերպությունները տարածեցին հայտարարություն՝ նշելով, որ քաղաքապետարանը խախտել է ոչ միայն լրագրողների՝ ազատորեն տեղեկություններ ստանալու և տարածելու, այլև հանրության տեղեկացված լինելու իրավունքը:[23]

[21] «Մենք գնում ենք Երևանի ավագանու նոր ընտրությունների». Հայկ Մարության https://hetq.am/hy/article/160704

[22] Տիգրան Ավինյանն ընտրվեց Երևանի քաղաքապետ https://www.azatutyun.am/a/32630847.html

[23] Ներողամտություն հայցել լրագրողներից՝ քամահրական վերաբերմունքի համար. լրագրողական կազմակերպությունների հայտարարությունը https://medialab.am/268773/

«Անկախ դիտորդ» դաշինքի գործողությունները և իրավասու մարմինների արձագանքը

2023թ. մայիսին Անկախ դիտորդ դաշինքը, հղում կատարելով նախորդ ՏԻՄ ընտրությունների ընթացքում արձանագրված հիմնական խնդիրներին, մի շարք առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ՀՀ Արդարադատության նախարարությանը և ՀՀ Վարչապետի աշխատակազմին: Այդ առաջարկությունները հրապարակվել են նաև կազմակերպության կայքում:[24] Առաջարկությունների հիմնական մասով նշվել է օրենսդրական փոփոխությունների համատեքստում դրանց քննարկման կարիքը: Դաշինքը հետևողական կլինի այս առնչությամբ: Տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների մատչելիության առումով գործողությունները ներկայացված են համապատասխան բաժնում:

Նախընտրական քարոզչության փուլում Անկախ դիտորդը պատրաստել է տեղեկատվական նյութեր՝ ընտրական օրենսդրության կարգավորումների վերաբերյալ, որոնք հրապարակվել են Անկախ դիտորդի ֆեյսբուքյան էջով:

Ընտրական գործընթացների վերաբերյալ Անկախ դիտորդի անունից Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն ուղարկել է տեղեկատվության 22 հարցում, 1 հայցադիմում և դրա վերաբերյալ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, 7 հաղորդում և 11 դիմում:

Տեղեկատվության հարցումների միջոցով կազմակերպությունը տեղեկատվություն է հայցել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից (3), ՀՀ Վարչապետի աշխատակազմից (1), Երևանի քաղաքապետարանից (4), Երևանի վարչական շրջանների թաղապետարաններից (մեկական) և Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունից (1):

- Տեղեկատվության առաջին հարցումն ուղղվել է ՀՀ Ներքին գործերի նախարարություն և վերաբերել է 2018թ.-ից ի վեր Երևան քաղաքում հաշվառված անձանց թվաքանակի փոփոխությանը: Հարցման պատասխանի համար պահանջվել է լրացուցիչ ժամանակ, իսկ պատասխանը ստացվել է ուշացված: Ստացված թվական տվյալների վերլուծությունը ներկայացված է սույն զեկույցի Ընտրական ցուցակներ բաժնում:
- Անկախ դիտորդը ստացել է ահազանգ, որ Երևան քաղաքի ենթակայության տակ գտնվող մի շարք հիմնարկների տնօրենների և ժամանակավոր պաշտոնակատարների պաշտոնավարման ժամկետները լրանում են աշնանը և նրանք իրազեկվել են, որ իրենց վերանշանակվելու հավանականությունը կախված է նրանից, թե որքանով կաջակցեն Տիգրան Ավինյանի և Քաղաքացիական պայմանագրի ընտրությանը: Ըստ

[24] Առաջարկությունների փաթեթ Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ, https://hcav.am/independent-observer-18-05-2023/

այդմ Երևանի քաղաքապետի պաշտոնակատարին ուղղված հարցումը վերաբերել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների ղեկավարմանը: Մասնավորապես հայցվել է տեղեկություն՝ որ կառույցներն են ղեկավարվում տնօրենի, որոնք՝ ժամանակավոր պաշտոնակատարի կողմից և որոնք են պաշտոնավարման ժամկետները: Ի պատասխան Երևանի քաղաքապետարանն ուղարկել է իր ենթակայության տակ գտնվող պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ցանկը՝ առանց հայցված տեղեկության: Լրացուցիչ երկրորդ հարցման արդյունքում տեղեկությունը տրամադրվել է: Տրամադրված տեղեկությունից պարզ է դառնում, որ կազմակերպությունների գերակշիռ մասը ղեկավարվում է ժամանակավոր պաշտոնակատարի կողմից «մինչև մրցույթի կայանալը»: Ընդ որում, ըստ տրամադրված ցանկերի՝ *2 դեպքում ժամանակավոր պաշտոնակատարները պաշտոնավարում են 2015 թվականից ի վեր*: Ժամանակավոր պաշտոնակատարներից 5-ն այդ պաշտոնը զբաղեցնում են 2020 թվականից, 17-ը՝ 2021 թվականից, 98-ը՝ 2022-ից: Այս հարցման արդյունքում ստացված տեղեկությունն առաջացնում է բազմաթիվ հարցեր, որոնք ընտրական գործընթացների հետ ուղղակի առնչություն չունեն, ըստ այդմ չեն արծարծվի այս զեկույցում և քանի որ մրցույթի կամ պաշտոնավարման ժամկետներն անորոշ են, վերոնշյալ ահազանգի իսկությունը սրանով հնարավոր չէ հերքել կամ հաստատել:

- Երևանի քաղաքապետին ուղղված հաջորդ հարցմամբ հայցել ենք տեղեկություն քաղաքապետարանի աշխատակազմի արձակուրդների վերաբերյալ: Այս տեղեկությունն անհրաժեշտ էր ուսումնասիրելու համար՝ արդյոք քարոզչությանը մասնակցող համայնքային պաշտոնյաները գտնվում են արձակուրդում: Նույնանման հարցումն ուղարկվել է նաև բոլոր 12 թաղապետարաններին: Թե՛ քաղաքապետարանից, թե՛ թաղապետարաններից ստացվել է պատասխան, որ հարցմանը պատասխանելու համար անհրաժեշտ է լրացուցիչ 30-օրյա ժամկետ: Արդյունքում բոլոր պատասխանները ստացվել են ընտրություններից հետո և միայն մի քանի դեպքերում է հնարավոր եղել համադրել տվյալները և հասկանալ, որ անձը չի գտնվել արձակուրդում: Այս դեպքերը ներկայացված են զեկույցում:
- Երևանի քաղաքապետարանին ուղղված ևս մեկ գրությամբ հայցվել է տեղեկություն Երևանի քաղաքապետի տեղակալների պաշտոնավարման ժամկետների և համակարգման ոլորտների վերաբերյալ: Հարցման նպատակն էր հասկանալ, թե որ ոլորտներն է համակարգում Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու, Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը և ինչ տրամաբանությամբ: Հարցմանն ի պատասխան քաղաքապետարանը ներկայացրել է պաշտոնավարման ժամկետները և քաղաքապետի որոշումների ցանկը, որոնցով սահմանվել են գործառույթները: «Երևանի քաղաքապետի տեղակալների և աշխատակազմի քարտուղարի միջև պարտականությունների բաշխում կատարելու մասին» Երևանի

քաղաքապետի 2019 թ. N308-Ա որոշումից բխում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության, շինարարության և բարեկարգման, կոմունալ տնտեսության, տրանսպորտի վարչությունների աշխատանքները, վերոնշյալ ոլորտները համակարգել է Երևանի քաղաքապետի 1-ին տեղակալ Հրաչյա Սարգսյանը, իսկ մշակույթի և տուրիզմի ոլորտները՝ քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը: Արդեն Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 2022թ. N605-Ա որոշմամբ վերջինս շարունակել է համակարգել միևնույն ոլորտները, իսկ մշակույթի և տուրիզմի ոլորտները համակարգել է առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը: 2023թ. մարտի 22-ին, Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի հրաժարականից 5 օր անց քաղաքապետի առաջին տեղակալ և քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի որոշմամբ (N676-Ա) «Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյան՝ համակարգում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության, շինարարության և բարեկարգման, մշակույթի և տուրիզմի, կոմունալ տնտեսության, տրանսպորտի վարչությունների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատանքները, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի կողմից համատեղ իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի կատարումը»: Այսպիսով Տիգրան Ավինյանը ստանձնեց ոչ միայն այն ոլորտների համակարգումը, որոնց համար նախկինում պատասխանատու էին քաղաքապետի առաջին տեղակալները, այլ նաև լրացուցիչ գործառույթներ, որոնք մինչ այդ ենթադրաբար քաղաքապետի ուղիղ համակարգման ներքո էին՝ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատանքները, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի կողմից համատեղ իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի կատարումը: Այսպիսով Տիգրան Ավինյանին ըստ էության վերապահվել են այնպիսի լիազորություններ, որոնք ապահովում են առավելագույն տեսանելություն, վարչական ռեսուրսի տիրապետում և պաշտոնավարման առավելություն (incumbency advantage): Ի լրումն այս տեղեկատվության՝ հարկ է նշել, որ Ինֆոքոմ լրատվականը պարզել էր, որ Տիգրան Ավինյանը նաև սկսել է վարել քաղաքապետարանի գործակարգավարական նիստերը, երբ այդ գործառույթը դեռևս վերապահված էր քաղաքապետին և համապատասխան որոշման մեջ փոփոխություններն իրականացվել են հետհայց: [25]

- Հաջորդ հարցումն ուղղված է եղել ՀՀ վարչապետի աշխատակազմին և վերաբերել է քվեարկության սենյակների տեսանկարահանման և հեռարձակման տեխնիկական պահանջներին: Հարցման նպատակը տեսանկարահանման միջոցով դիտորդության կազմակերպումն էր և

[25] Գործակարգավարական նիստը Ավինյանի վարելով՝ խախտվել է քաղաքապետի որոշումը. վերջինս հետագայում փոփոխվել է https://infocom.am/hy/Article/102370

ստացվել է ամբողջական պատասխան: Նույն գրության պատճենն ուղարկվել է նաև ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

- Մյուս հարցումն ուղղված է եղել Քաղաքացիական պայմանագիր կուսակցությանը: 2023թ. օգոստոսի 28-ին Անկախ դիտորդն արձանագրել էր, որ Երևանի Օհան Դուրյան 29-ի հասցեի բակում քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը բաժանել էր գնդակներ: Տեղեկատվության հարցումը վերաբերում էր նշված գնդակների արժեքին, ինչպես նաև Հյուսիսային պողոտայի վրա գտնվող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական շտաբի օգտագործման պայմաններին և արժեքին: *Հարցմանը որևէ պատասխան չի ստացվել:*
- Եվս մեկ հարցմամբ կազմակերպությունը հայցել է տեղեկատվություն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝ որ կազմակերպություններն են «Հայաքվե» դիտորդական առաքելության կազմում: Տեղեկատվության հարցման պատասխանը ստացվել է ժամանակին, իսկ տեղեկատվությունը հետագայում հրապարակվել է նաև ԿԸՀ կայքում:
- Վերջին հարցմամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից կազմակերպությունը հայցել է տեղեկատվություն այն մասին՝ արդյոք ՀՀ վարչապետին Կենտրոնական ընտրական հանձնաժողովից տրվել է այնպիսի պարզաբանում, ըստ որի նա կարող է իրականացնել քարոզչություն ոչ աշխատանքային ժամին ի պաշտոնե հանդես գալիս: Ողջ հարցազրույցի ընթացքում ՀՀ վարչապետի դերում հանդես եկող Նիկոլ Փաշինյանը պնդում է, որ իրենք ստացել են խիստ զգուշացումներ օրենքին հակասող որևէ գործողություն չանել և միաժամանակ կոչ է անում քվեարկել Քաղաքացիական պայմանագրի և Տիգրան Ավինյանի օգտին: ՀՀ Կենրոնական ընտրական հանձնաժողովից նաև հայցել ենք տեղեկատվություն, թե արդյոք հարցազրույցն ուսումնասիրվում է՝ բացահայտելու վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումը: Վերջին կետով կազմակերպությունը դիմել է ԿԸՀ-ին վարչական ռեսուրսի չարաշահման փաստը պարզելու համար վարչական վարույթ հարուցելու հարցով: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից ստացվել է խուսափողական պատասխան, որ նախընտրական քարոզչության սահմանափակումների վերաբերյալ հրապարակվել է պարզաբանում ԿԸՀ կայքում, իսկ նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանմամբ իրականացման հարցերը գտնվում են ԿԸՀ մշտական ուշադրության կենտրոնում:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիմել է ՀՀ վարչական դատարան հայցված տեղեկատվության տրամադրումն ապահովելու պահանջով: Նպատակ ունենալով ստանալ տեղեկատվության հարցման համար լրացուցիչ պահանջի անհրաժեշտության պատշաճ հիմնավորվածության գնահատական՝ հայցը ներկայացվել է հարցվողներից միայն մեկի՝ Նոր Նորքի վարչական շրջանի ղեկավարի դեմ: *ՀՀ վարչական դատարանը վերադարձրել է դիմումը, ինչի կապակցությամբ կազմակերպությունը ներկայացրել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, որոնք մերժվել են:*

Նախընտրական քարոզչության ընթացքում ուղարկվել է հանցագործության մասին 4 հաղորդում, իսկ քվեարկության օրը՝ 3 հաղորդում:

- Հանցագործության մասին առաջին հաղորդումը ներկայացվել է Աջափնյակ վարչական շրջանում Ուժը հայրենյաց կուսակցության ղեկավար Տիգան Արզաքանցյանի խոստմանը՝ իր հիմնադրամի միջոցով ավարտին հասցնել շենքի բակում գտնվող եկեղեցու շինարարությունը: Կազմակերպությունը դիմել է գլխավոր դատախազին՝ վարույթ հարուցելու և ընտրակաշառքը կամ բարեգործության արգելքի ենթադրյալ խախտման փաստով: Հաղորդումը վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին, որը որոշել է դեպքի առնչությամբ վարույթ չհարուցել
- Երկրորդ հաղորդումը վերաբերել է Ֆեյսբուք սոցիալական ցանցում օգտատեր Արթուր Չախոյանի հրապարակած տեսանյութին, որտեղ նա բացահայտում է, որ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության հավաքին մասնակցում են համայնքային ենթակայության հիմնարկների աշխատանքային կոլեկտիվներ, ինչում առերևույթ վարչական ռեսուրսի չարաշահում կա: Գլխավոր դատախազությունը հաղորդումը վերահասցեագրել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին: *Գործի հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկություն չի ներկայացվել:*
- Երրորդ հաղորդումը վերաբերել է «Մայր Հայաստան» դաշինքի կողմից Գոյ թատրոնի տոմսերի բաժանմանը: Հաղորդումը վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին և հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկություն հայտնի չէ:
- Չորրորդ հաղորդումը վերաբերում է սեպտեմբերի 15-ին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողների և դասախոսների հանդիպմանը Քաղաքացիական պայմանագիր կուսակցության քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի հետ: Հանդիպման սկզբում ներկայանալով որպես համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ խոստանում է բարելավել համալսարանի ենթակառուցվածքները, ստեղծել նոր լսարաններ, սպորտդահլիճ, լողավազան, ապա շարունակում քարոզչությունը՝ որպես քաղաքապետի թեկնածու: Անկախ դիտորդ դաշինքն այս ելույթը գնահատել է որպես բարեգործության արգելքի խախտում և Գլխավոր դատախազությանը հաղորդում ներկայացրել այդ հիմքով: Հաղորդումը վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին, որը եզրակացրել է, որ հաղորդմամբ չի փաստվում այնպիսի դեպքի մասին, որը համապատասխանում է Քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի: Այս կապակցությամբ հետագա գործողությունները ներկայացված են ստորև՝ դիմումների վերաբերյալ տեղեկատվության մասում:
- Մյուս երեք հաղորդումները վերաբերում են քվեարկության սենյակում Անկախ դիտորդ դաշինքի դիտորդների աշխատանքի խոչընդոտմանը: Ներկայացված 2 հաղորդումների ուղղությամբ իրականացվել և իրականացվում են որոշակի գործողություններ, իսկ 1 հաղորդման

վերաբերյալ զեկույցի պատրաստման պահի դրությամբ *հայտնի է դարձել, որ կարճման մասին որոշում է կայացվել:*

Երևանի ավագանու ընտրությունների առնչությամբ ուղարկվել է 11 դիմում, որոնցից 6-ը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին, 1-ը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությանը, 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազությանը և հակակոռուպցիոն կոմիտեին, 2-ը՝ Երևանի քաղաքապետարանին, և 1-ը Յուքոմ ընկերությանը:

- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված դիմումներից երկուսը վերաբերել են օրենքով սահմանված վավերապայմանների բացակայությամբ քարոզչական տպագիր նյութերի տարածմանը: Ներկայացված խախտումները վերաբերել են Քաղաքացիական պայմանագիր, «Լուսավոր Հայաստան», «Ապրելու երկիր», «Արդար Հայաստան» և «Հանուն սոցիալական արդարության» կուսակցություններին և «Մայր Հայաստան» կուսակացությունների դաշինքին: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատասխանել է, որ նշված տպագիր նյութերի խախտումների վերաբերյալ իրազեկել է կուսակցություններին և դադարեցվել է դրանց տարածումը:
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված երրորդ դիմումը վերաբերել է Վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահմանը: Կազմակերպությունը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ուշադրությունն է հրավիրել Ֆեյսբուք սոցիալական ցանցում օգտատեր Արթուր Չախոյանի հրապարակած տեսանյութին: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահասցեագրել է դիմումը ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով պարզել, թե կան Քրեական օրենսգրքով արգելված արարքներ: Ինչպես նշեցինք Կազմակերպությունը զուգահեռաբար արդեն իսկ հաղորդում էր ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն: Գլխավոր դատախազությունը հաղորդումը վերահասցեագրել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին: Գործի հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկություն չի ներկայացվել:
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված չորրորդ դիմումը վերաբերել է սահմանված վայրում փակցված պաստառների վնասման դեպքերին: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահասցեագրել է դիմումը ՀՀ ՆԳՆ ոստիկանություն՝ խախտումները պարզելու և հնարավոր կատարողներին հայտնաբերելու համար: *Ոստիկանության հետագա գործողությունների վերաբերյալ տեղեկություն հայտնի չէ:*
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված հինգերորդ գրությունը վերաբերել է քվեարկության օրվան: Դրանով ներկայացվել է մամուլում տեղ գտած հրապարակում, որում «Հայաքվե» դիտորդական առաքելության անդամները կողմնակալ հրապարակումներ են կատարել սոցիալական ցանցերում: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացրել է, որ կատարում է ուսումնասիրություն, *սակայն ուսումնասիրության արդյունքների մասին չի իրազեկել*:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուղղված վերջին գրությամբ հայցվել է տեղեկություն տեղամասային կենտրոնների և

ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների տեսանկարահանման նյութերի ստացման վերաբերյալ: ԿԸՀ ուղղորդմամբ՝ Կազմակերպությունը տեսագրությունները ստանալու համար դիմել է «Յուքոմ» ընկերությանը:

- Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառների 16 դեպքերով, դրանց հեռացնելու պահանջով 2 դիմում է ներկայացվել Երևանի քաղաքապետի պաշտոնակատարին: Առաջին դիմումն ուղարկվել է սեպտեմբերի 6-ին և վերաբերել է 7 դեպքի, որոնցից 2-ի վերաբերյալ քաղաքապետարանը տեղեկացրել է, որ դրանք գտնվում են նախատեսված վայրում, 3պաստառներ ապամոնտաժվել են: Վերջին դեպքի վերաբերյալ քաղաքապետարանը նշել է, որ պաստառները գտնվում են շենքի վրա, որի ներսում կուսակցության շտաբն է: Հաշվի առնելով, որ շենքը բազմաֆունկցիոնալ է, իսկ կուսակցությունն այդտեղ ընդամենը մեկ սենյակ է վարձակալում, ընտրական շտաբի գտնվելը շենքում բավարար հիմնավորում չէ նախընտրական պաստառների նման քանակը թույլատրելի համարելու համար: Երկրորդ դիմումն ուղարկվել է սեպտեմբերի 12-ին և վերաբերել է 9 դեպքերի: Վերջինիս Երևանի քաղաքապետարանից պատասխան չի ստացվել:
- ՀՀ ներքին գործերի նախարարությանն ուղղված դիմումով կազմակերպությունը խնդրել է պարզել Մայր Հայաստան դաշինքի ավագանու թեկնածու Մեսրոպ Մանուկյանի հրապարակած տեղեկության հանգամանքները: Ըստ հրապարակման ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները այցելել են թեկնածուի հայրական տուն, հարցրել տեղեկատվություն հաշվառված և երկրում գտնվող ընտրողների մասին և վերցրել հեռախոսահամարը: Մի քանի օր անց թեկնածուի մայրը զանգ է ստացել Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Տիգրան Ավինյանի շտաբից, որով նրան հրավիրել են հավաքի: Թեկնածուն պնդել է, որ հեռախոսահամարը շտաբին փոխանցել է ոստիկանության ծառայողը: ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը տեղեկացրել է, որ ծառայողական քննության արդյունքում պարզել է, որ հրապարակման մեջ նշված հեռախոսահամարը չի պատկանում ոստիկանության որևէ ծառայողի, ինչպես նաև գտնվում է անհասանելի վիճակում, ինչի արդյունքում հնարավոր չէ պարզել տիրոջ ինքնությունը:
- Վերջին դիմումն ուղղված է եղել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազին՝ սեպտեմբերի 15-ին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողների և դասախոսների հանդիպմանը Քաղաքացիական պայմանագիր կուսակցության քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի հետ հանդիպման վերաբերյալ ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումից հրաժարվելուն: Դիմումում հիմնավորվել է, թե ինչու էր հաղորդումը ներկայացվել բարեգործության հատկանիշներով և պահանջ է ներկայացվել՝ վերացնել քրեական վարույթ նախաձեռնելուց

հրաժարվելու մասին վարութային ակտը և քրեական վարույթ հարուցել: Դիմումը մերժվել է հիմնավորմամբ, թե Տիգրան Ավինյանը վերոնշյալ ելույթով իբր ընդամենը փաստել է, թե իրենից ինչ ակնկալիքներ կարող են լինել՝ որպես հոգաբարձուների խորհրդի նախագահ: Որոշումը բողոքարկվել է ՀՀ Հակակոռուպցիոն դատարան, դատարանն էլ առանց հղում կատարելու որևէ իրավական նորմի մերժել է բողոքը, նշելով բողոքի անհիմն լինելը, որի շրջանակներում Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին ներկայացվել է մինչդատական ակտի վիճարկման բողոք: *Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել հակակոռուպցիոն դատարանի որոշումը: Վճռաբեկ բողոքը ևս մերժվել է:*

- 2024 թվականի հունվարի 30-ին «Ինֆոքոմ» լրատվամիջոցը հրապարակել է տեղեկատվական նյութ (Ուսումնասիրություն), որը վերաբերում է 2023 թվականի Երևան քաղաքի ավագանու ընտրություններին ընդառաջ տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաքին, համաձայն որի ընտրությունների ընթացքում ՔՊ նախընտրական քարոզարշավը ֆինանսավորվել է անհայտ աղբյուրներից՝ կասկածելի գործարքների միջոցով: Ուսումնասիրության արդյունքում «Ինֆոքոմ» լրատվամիջոցը արձանագրել է, որ կազմակերպված մեխանիզմի գործադրմամբ անհայտ ծագման գումարներ են ուղղվել ՔՊ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորմանը՝ երբեմն գործընթացից ընդհանրապես անտեղյակ քաղաքացիների անվան տակ:
- Նշված հրապարակման վերաբերյալ 2024 թ. փետրվարի 2-ին Կազմակերպության կողմից հանցգործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ պահանջ ներկայացնելով նախաձեռնել քրեական վարույթ: Կազմակերպությունը դեռևս քրեական վարույթ նախաձեռնելու մասին որոշում չի ստացել, սակայն լրատվական ծառայությունները հրապարակել են նյութեր, համաձայն որոնց վարույթ նախաձեռնելը մերժվել է:
- 2024 թ. մարտի 11-ին կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ ստանալու հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումը:

Հիմնական եզրակացություններ

Երևանի ավագանու հերթական ընտրությունը, որին մասնակցում էր 14 քաղաքական ուժ, անցել է մրցակցային պայմաններում: Միաժամանակ, ընտրությունների նկատմամբ հանրային հետաքրքրությունը բավականին ցածր է եղել: Արդյունքում, ավագանին ձևավորվել է ընտրելու իրավունք ունեցող անձանց 28.5%-ի քվեարկությամբ: Թեև առաքելությունն ահազանգել է քարոզարշավի ժամանակ և դրան նախորդող ժամանակահատվածում վարչական ռեսուրսի զանգվածային չարաշահումների մասին, այդուհանդերձ, ընտրողները մեծամասամբ ազատ էին իրենց ընտրական կամքն արտահայտելու առումով:

Ընտրություններում առավելություն ստանալու նպատակով վարչական ռեսուրսի չարաշահման պայմաններում ակնհայտ է դառնում, որ այս երևույթի դեմ պայքարի առկա գործիքակազմը բավարար չէ: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել ընտրություններին մասնակցող ուժերի բարեխիղճ ու հավասար մրցակցության հնարավորությունն առավել տևական ժամանակահատվածում, քան նախընտրական քարոզչության՝ գործող Ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակն է:

Շարունակում է մտահոգիչ մնալ ընտրական ոչ պատշաճ վարչարարությունը. տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների, անդամների ոչ պատշաճ պատրաստվածության հետևանքով առանձին տեղամասերում չէր ապահովվում ընտրական ընթացակարգերի գրագետ, անխափան իրականացումը, որը կապահովեր քվեարկության բնականոն ընթացքը: Միաժամանակ դրական ենք գնահատում բացահայտված խախտումները վերացնելու պատրաստակամությունը:

Գտնում ենք, որ ընտրական հանցագործությունների հաղորդումները (այդ թվում՝ Տիգրան Ավինյանի կողմից Պոլիտեխնիկական համալսարանում կատարվածի մասին) պետք է արժանանան պատշաճ քննության, իսկ Հանրային հեռուստատեսության խիստ իշխանամետ մոտեցումը պետք է դառնա հետագա քննարկումների առարկա:

«Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդական առաքելության նպատակն է բացահայտել օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի խնդիրներն ընտրական գործընթացներում և առաջարկել լուծումներ, որոնք կնպաստեն ժողովրդավարության ամրապնդմանը: Այս առումով հատկապես կարևոր ենք համարում դիտորդական առաքելության բացահայտումների հրապարակումն ու դրանց պատշաճ քննությունն իրավապահ մարմինների կողմից:

Առաջարկություններ ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ

Հաշվի առնելով Ընտրական օրենսդրության շարունակական փոփոխությունների ընթացիկ աշխատանքային քննարկումներում Անկախ դիտորդ դաշինքի ներգրավումը, ստորև ամփոփ տեսքով ներկայացվում են միայն անհրաժեշտ փոփոխությունների առաջնահերթ ուղղությունները՝

- Ներդաշնակեցնել քաղաքական ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության ջանքերը՝ ապահովելով նախընտրական փուլի և կուսակցության ընթացիկ գործունեության ֆինանսավորման ամբողջական վերահսկողությունը մեկ մարմնի կողմից
- Բացառել իրավապահ կամ ուժային մարմինների միջամտությունը տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը կամ օրինական գործունեությանը
- Ապահովել ընտրական և ընտրություններին առնչվող դատական վեճերի հրատապ լուծումը և բացառել ընտրովի մարմնի գործունեության սահմանափակումը
- Ուժեղացնել վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելման մեխանիզմները՝
  ա) քարոզչության ողջ ընթացքում հանրային պաշտոն զբաղեցնող թեկնածուների ամբողջական արձակուրդի, բ) նախընտրական փուլում այլ՝ ոչ ընտրական ժամանակահատվածների համեմատ բյուջետային մուտքերի և ելքերի հավասարակշռությունն ու կանխատեսելիությունն ապահովելու միջոցով
- Կանխել խմբակցությունում կանանց ներկայացվածության բացառումը՝ արգելելով մանդատի փոխանցումը մյուս սեռի թեկնածուին սահմանված նվազագույն քվոտայից պակաս լինելու դեպքում
- Ընտրված ավագանու կողմից կոալիցիա չձևավորելու և համայնքի ղեկավարի թեկնածուի շուրջ քաղաքական համաձայնության չգալու դեպքում՝ ապահովել համայնքի ղեկավարի ընտրությունը քաղաքացիների ուղիղ քվեարկությամբ՝ կարճ ժամանակում երկրորդ փուլի անցկացման միջոցով՝ բացառելով ավագանու գործունեության անհարկի խոչընդոտումը և նոր ընտրությունների կամայական նշանակումը.
- Ապահովել ընտրական ողջ գործընթացի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար

Անկախ դիտորդ դաշինքի մասին

Դիտորդական առաքելությունն իրականացվել է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ և գործընկեր կառույցների կողմից՝

~ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
~ Իրազեկ քաղաքացիների միավորում

Դաշինքը համագործակցում է հետևյալ անդամ և գործընկեր կառույցների հետ

~ «Գյումրու առաջընթաց» ՔՀՀԿ-ի
~ «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ի
~ «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի

Read more https://hcav.am/ind-obs-18-09-2023/

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հեռ. (+374 322) 4 22 68: ֆաքս: (+374 322) 4 12 36 Ինտերնետային կայքէջ: www.hcav.am էլ. Փոստ: hcav@hcav.am
«Իրազեկ քաղաքացիների միավորում» հեռ. (+374 41) 355042 Ինտերնետային կայքէջ: http://uicarmenia.org/, էլ. Փոստ: uicarmenia@gmail.com

Facebook: @Անկախ դիտորդ - Independent Observer
E-mail: independentobserverarm@gmail.com